




ԶՄԻԱԾԻՆ



1974



ԼՍ
ՏԱՐԻ




ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Կ. Ե. Ե.


1974





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոմիտեի ներքին հարցերի վարչության հ. հ. Գևորգ Զ կաթողիկոսի մահվան տասներորդ տարելիցի առթիվ	9
ԽՍՀԱԳՐԱԿԱՆ—Երանաշենի Հայրապետը	7
Հայոց Հայրապետի ողջույնի խոսքը զամասրահում	10
Կորիմ Արքուշյուն Յ. Մաքսիմ Պատրիարքի խոսքը զամասրահում	12
Հաղորդագրություն	15
Բուլղարական օրթոդոքս եկեղեցու Հովվապետ Կորիմ Արքուշյուն Մաքսիմ Պատրիարքը Մայր Աթոռում	18
ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՄԵՏԱՆ—Հայ եկեղեցվո ամփոխարինելի կորուստը	84
Համդիտավոր ս. պատարագ, հայրապետական քարոզ և հոգեհամզիտ ներքին հարցերի վարչության հ. հ. Գևորգ Զ կաթողիկոսի մահվան 20-րդ տարելիցի առթիվ	35
Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը՝ ուղղյալ Միացյալ Նահանգացի հայոց արևելյան թեմի տարեկան թեմական պատգամավորական ժողովին	41
Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը՝ ուղղյալ Միացյալ Նահանգացի հայոց արևելյան թեմի հոգևորականաց համագումարին	48
Երջանկահիշատակ հ. հ. Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսի ամտիպ մեկ մասնակը՝ ուղղված Բեմթորքերի արքեպիսկոպոս դոկտ. Զեոֆֆրիմ՝ հայ-ամզլիկան եկեղեցական հարաբերությունների և եկեղեցիների խաղաղության ի մպաստ կատարվող ջանքերի մասին	45
ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ	56
Մահ Գրիգոր Գյուլյանի	58
Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի	60



ԽՍՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՇԵՆ
«ԷՋՄԻԱՇԵՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՍՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
 Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Համըմված է արտադրության 7/V 1974 թ.: Ստորագրված է տպագրության 12/VI 1974 թ.:
 Տպագրական 4,75 մամ. + 8 մերդիր, թուղթ 60X84¹/₈, պատվեր 802

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1974 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Յ. Յ. ՎԱՋԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱԾԱՌԻ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱԾՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԳՐԱԿԸ
ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԱՀՎԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԳ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ***

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈ՞ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՐԱԶՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ
ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԿԻՆ
ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍԺՈՒՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԵՒ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Ի վախճանել առն արդարոյ, ոչ կորնչի յոյս»:
(Առակք ԺԱ. 7)

Հայոց Բիճաւորց աշխարհէն, եկեր ու անցեր էին օրերը ձմրան: Արա-
րատի յաւերժական նայուածքի տակ, Հայաստանի մայր հողը ծածկուեր էր
կրկին ծիլ ու կանաչով, ծաղիկ գորգերով: Հայ շինականը, աչքերը լեցուն

* Երջանկաճիշատակ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի մահվամ քսաներորդ տարեկիցի «ու-
րիվ վերաճրատարակում եմք Ն. Ս. Օծուխյուն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապե-
տի՝ յուսահոգի կաթողիկոսի մահվամ տասներորդ տարեկիցի կապակցությամբ գրած 8 մա-
լիս 1864 թվակիր կոմդակը («Էջմիածին» ամսագիր, 1864, № Ե, էջ 8):

կեանքի երազով, իր պապերու արտոն ու այգին կը բանար, գոհութեան աղօթքը շրթներուն առ բարձրեալն Աստուած, երբ ս. Էջմիածնի կամարներուն տակ, խաղաղ, անվրդով, իր աչքերը կը փակէր Հայրապետը Հայոց՝ Գեորգ Զ նորնախիջեանցին:

Գարնան պայծառ առաւօտ մըն էր՝ 1954 մայիս 9-ը:

Երախտագէտ հայ եկեղեցին և հայ ժողովուրդը ծանր սուգի դրօշ սրարգեցին ու փառքով, աղօթքով, մայր հողին յանձնեցին յոգնած Թարմիկը մեծ Հայրապետին:

Այդ օրէն անցեր են արդէն տասը տարիներ:

Տարիները բազում յիշատակներ կը տանին իրենց հետ, յանձնելու հոսիար զանոնք գիրկը գորշ մոռացութեան: Բայց կան յիշատակներ, որոնք անցնող տարիները առաւել կը լուսաւորեն, առաւել կ'արժնորեն ու կեանքի կը կոչեն: Ժամանակը ինքն է իրաւ դատաւորը մարտոց կեանքին, անոնց գործերուն: Աստուածային նախախնամութիւնը, պատմութեան դատաստանով, արդարութիւն կը գործէ:

Յիշատակը Գեորգ Զ կաթողիկոսին այդպէս ահա կը ներկայանայ այսօր, մեր գիտակցութեան առաջ:

Անձնատրոսութիւն մը, հոգիով ու մարմնով առողջ, ամրակոտ, Հայոց աշխարհի լեռներուն մօտ: Նկարագիր մը հզօր ու ազնիւ, խոր զգացումովը մարդկային քարոյականի բարձր արժէքներուն: Հաւատաւոր, անքեր հոգի և քաջ հովուապետ, անելի քան վաթսուն տարիներու հաւատարիմ ծառայութեամբ: Ուխտեալ զինուոր և սին եկեղեցւոյ. և արթուն լուսարար ս. Էջմիածնի: Ծարտար նաւապետ փոթորիկներու պահուն, անվեհեր առաջնորդ իր ժողովուրդին դէպի նաւահանգիստը խաղաղ ափերու: Պաշտպան հայրենեաց, խիզախ, աննահանջ, հայկական հոգիի մարմնացած վահան: Հայրենասէր՝ իր ամբողջ էութեամբ, բովանդակ իր կեանքով, մտածումներու և տեսիլքներու իր ամբողջ աշխարհով, իր կենդանի գործով:

Ահա Ան, երիտասարդ վարդապետ, մէկ ձեռքին մէջ բռնած խաչը Քրիստոսի, միւսին՝ գիրքը հայոց պատմութեան, անելի քան քսան տարիներ կըրթական մշակ, հմուտ քարոզիչ և կազմակերպիչ հոգևոր կեանքի, իր ծննդավայր Նոր նախիջեանցի մէջ:

Կու գամ սակայն մտայլ ու ծանր օրեր: Համաշխարհային առաջին պատերազմն է բռնկած: Արևմտեան Հայաստանի մէջ կը նահատակուի ժողովուրդ մը ամբողջ: Տեղահանութիւն, սով, արիւն և մահ: Սպանդի ճիրաններէն հրաշքով փրկուած, անվերջ կարաւաններ թշուառ հայերու, կը թափուին Արաքսի ափին:

Նորապսակ Գեորգ եպիսկոպոս, հուժկու ձեռքերով և հայ մարդու արի իր սրտով, կանգնած է ամուր՝ գաղթականներու փրկութեան գործի առաջին զօներուն վրայ, կատարելով իր պարտքը իբրև անձնդիր ու բարի հովիւ և հարազատ զաւակը հայ ժողովուրդին:

Պատերազմէն յետոյ դժուար տարիներ, ալեկոծումներ, հերոսական ճիգեր՝ բուժելու համար վէրքերը հայոց վիրաւոր ազգին և վերաշինելու քանդուած կոտորը հայ հայրենիքին: Բայց շուտով ահա խաղաղութիւն և մոր վերածնունդ, երջանիկ կեանքի պայծառ լուսաբաց: Գեորգ եպիսկոպոս, գաւազանը ձեռքին, բազում տարիներ իր ուժերը ի սպաս կը դնէ հայ եկեղեցւոյ ամրապնդման գործին, Վրաստան, Հայաստան և ս. Էջմիածին: Աստուծոյ խօսքը կը քարոզէ Ան իր ժողովուրդին. կը լուսաւորէ, յոյս կը ներշնչէ ու կը մխիթարէ:

Մայր Աթոռ Է Աճ իբրև տեղակալ կաթողիկոսի, երբ կը բռնկի մոր պատերազմ մը համաշխարհային:

Հայ ժողովուրդը ամբողջ, մէկ մարդու նման, ոտքի է կանգնած, ազատատենչ եղբայրական ժողովուրդներու կողքին, մղելու համար հայրենական սրբազան կոչի, խաւար ու դաժան չար ուժերու դէմ:

Հանգուցեալ Հայրապետը ներկայ է կրակի դիմաց, հայրենեաց պաշտպան հայ ժողովուրդի զաւակներուն հետ: Չեն մոռցուիլ երբեք կոչերն իր մարտի, քարոզներն իր հոր և իր ծառայած կազմակերպչական գործը հսկայական, զինուորագրելու համար Հայաստանի և սփիւռքի բոլոր հայերը: Սաւունցի Դաւիթի անունը կրող հրասայներու շարասիւնները ընծաներն են Հայոց Հայրապետին, հայրենական փառապանծ յաղթանակին համար, օժանդակութեամբը մոլեցան հայրենասէր Գարեգին Ա Հայրապետին Տանն Կիլիկիոյ, որ Սարդարապատէն յետոյ, անգամ մը ևս իր անունը կ'արձանագրէր իւր ազգի պատմութեան գրքի մէջ ոսկի տառերով:

Եւ երբ հորիզոնէ հորիզոն, մեծ յաղթութեան շնորհները կը հնչէին, Գեորգ արքեպիսկոպոս, 1945-ի գարնան օրերուն, կ'օծուէր կաթողիկոս Ամենայն Հայոց, ողորմութեամբ Աստուծոյ և կամքովը ազգին:

Հայոց հին երկրի վրայ կ'իջնէր մոր առաւօտ և կը բացուէր հայրենաշէն կեանքի լուսեղէն ճամբայ:

Նոր կեանքի կը կոչուէր նաև հայ եկեղեցին:

Ծերունազարդ Հայրապետը Հայոց, ժամանակներու, պատերազմներու սերներէն յետոյ, ս. Էջմիածնի կամարներուն տակ, կը ստեղծէր ամէն բան գրեթէ ոչինչէն:

Մեծ հայրենասէրը եղաւ նաև մեծ հայրապետ:

Վերակազմեց միաբանութիւնը մեր Մայր Աթոռի, բացաւ դուռները հոգեւոր ճեմարանին, հիմնեց «Էջմիածին» ամսագիրը, բարեկարգեց ու կազմակերպեց ներքին թեմերը, և բնականոն ու սերտ գործակցութեան կապեր հաստատեց մեր նուիրապետական Աթոռներուն և արտասահմանի մեր թեմերուն հետ:

Գեորգ Զ կաթողիկոս, իր հոգևոր քարձը հեղինակութեան ներքև, անխռով պահպանեց հոգևոր միութիւնը հայ եկեղեցւոյ և միաւնութիւնը հայ ժողովուրդին: Զի ալք է պատգամը հայոց պատմութեան և կամքն Աստուծոյ, որուն Միածին Որդին Հայաստան իջաւ և այնտեղ հաստատեց սրբութիւն սրբոցը ամենայն հայոց:

Հոգելույս Հայրապետը եղաւ ու մնաց մինչև իր կեանքի վերջը՝ նաև մեծ տղօթող մը և պայքարող մը վասն խաղաղութեան համայն աշխարհի: Իր հեղինակաւոր խօսքը, իր արդար ձայնը տևապէս հնչեցին հզօր Էջմիածնի սուրբ քարձունքներէն:

Գեորգ Զ կաթողիկոսի կեանքն ու գործը մարմնացումն իսկ են աստուածային խաղաղարար կամքին ու հայոց պատմութեան հարազատ ոգիին:

Ահա վաստակը Հայոց Հայրապետին, որուն մահուան տասներորդ տարեկիցը կը կատարենք մենք այսօր:

Ով գիտէ իր կեանքն ու իր գործը ընծայաբերել իր մայր ժողովուրդին, իր մայր հայրենիքին, ով կը տեսնէ յստակ, կեանքը ալեկոծող Ռոսաքներուն մէջէն, ազգի և մայր երկրի յաւիտենական շահերու ուղին, ան կը մնայ ճշմարտապէս մեծ և յիշատակութեան արժանի պատմութեան գրքին մէջ:

Կը տօնենք Գեորգ Զ Հայրապետի յիշատակը, իբրև հայ եկեղեցւոյ ու հայ ժողովուրդի յաղթանակի օր: Կը տօնենք ուրախ, հպարտ սրտերով, որ Տէրը մեր եկեղեցիին պարգևեր էր հովուապետ մը մեծ, նման երանեալ Հայրա-

իւկտնէրուն, որոնք սլալծառ հետք են թողած Հայոց աշխարհի երկնակամարին վրայ:

Տաւր տարի յետոյ, հիմաւորց մեր երկրի վրայ, կրկին իջած է գարունը կեանքին: Նոյն Արարատի թաւրժական մայրամբին ներքև, մայր հողն Հայաստանի գարթնած է կրկին, ու ծածկուած ծիլ ու կանաչով, վառ ծաղիկներով: Հայ շինականը նոյն երազներով, նոյն երգն իր շրթներուն, իր պապեմական արտը կը հերկէ, երբ ս. Էջմիածնի լոյս կամարներէն աղօթք կը քարձրանայ դէպի երկինքը քարի՝ վասն խաղաղութեան հոգւոյն հանգուցեալ մեծագործ Հայրապետին մերոյ՝ Տ. Տ. Գեորգայ Զ կաթողիկոսին Ամենայն Հայոց:

Երանաշնորհ Հայրապետի հոգին, կեանքի միւս ափին, կը հանգչի իսուրադ, կը հանգչի երջանիկ, ու կ'ոգեշնչէ մեզ և պատգամ կու տայ բոլոր հայերու՝ ապրիլ անքաժան, սիրով միաբան, ամուր պառնայանել լոյս հաւատքը մեր քրիստոնէական, ամբողջ, անխռով ու ծաղկեալ պահել ս. եկեղեցին, շէն, անշարժ պահել համայն Ռայութեան հոգևոր կեդրոնն ու Էջմիածինը մեր, և բոլորովն սիրով, հաւատարմութեամբ, վերածնած Մայր Հայաստանի սուրբ հողի վրայ, կերտելու համար լուսափայլ ապագան հայ ժողովուրդին:

Այսու Մեր կոնդակաւ կը հրահանգենք, որ լուսաբնակ Գեորգ Զ կաթողիկոսի մահուան տասներորդ տարելիցին առթիւ, Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան պաշտօններ կատարուին կիրակի, մայիս 10-ին:

«Տերանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին, զի գործք իւրեանց չոգան զհետնոցա» (Յայտնթ. ԺԴ 13):

Ողջո՛յն և փա՛ռք Գեորգ Զ մեծ Հայրապետի լոյս յիշատակին:

Ողջո՛յն և փա՛ռք հայ առաքելական ս. եկեղեցիին և հայ հաւատացեալ համայն ժողովուրդին:

Ամէն:

Կալ Շէ

ՄԱՅՐԱՊՈՅՆ, ՊԱՏՐԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս 1-9-ն մայիսի

1984 փրկչական ամի,

և ի տումարիս հայոց ՌՆԺԳ,

ի մայրավանս սրբոյ Էջմիածնի:





ԵՐԶԱՆԱՆԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
(ԳՈՐԾ՝ ՆԿԱՐԻՉ ՍՏԵՓԱՆ ՄԻՆԱՅԱՆՆԻ)



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԵՐԱՆԱԾՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԸ

(1869—1894)

Մայիսի 9-ին յրացալ երջանկաբիշատակ Ս. Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մահվան 20-ամյակը:

Երանաշնորհ Ս. Տ. Գևորգ Զ կաթողիկոսը մեծ ու միաձուլլ ամբողջություն էր որպես տիպար հոգևորական, հայրենասեր եկեղեցական, խաղաղության ջերմ պաշտպան, կրթական մշակ, կազմակերպիչ և բարձրագույն կրթության տեր անձնավորություն:

Հանգուցյալ Վեհափառ Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատմությանը նորագույն շրջանի քացառիկ և ինքնատիպ դեմքերից մեկն էր, որի կյանքն ու գործունեությունը կապված են եղել մեր ժողովրդի վերջին հիսնամյակում տեղի ունեցած պատմական մեծ իրադարձությունների հետ:

Ավելի քան վաթսուց երկար տարիների վրա տարածվող նրա հոգևոր, եկեղեցական, կրթական, վարչական, հովվական և հայրենասիրական, խաղաղասիրական գործունեությունը Մայր Աթոռում առանձնապես ուսանելի է և նշանակալից նրանով, որ լուսահոգի Հայրապետը ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի գրասեղաններից սիճիկ Հայաստանյայց առաքելական եկեղեցու Եվրոպական բարձրագույն գազաթը բարձրացել է շնորհիվ իր անընկճելի հավատի, իր անձնական ու բարոյական այն հազվա-

գյուտ շնորհների և ձիրքերի, որոնց խոր արմատը գտնվում է նրան ծնունդ տվող հայ ժողովրդի հոգեկան երակներում:

Հանգուցյալ Հայրապետի գործունեությունը ընդարձակ հորիզոններ է ընդգրկել. ամեն անգամ, երբ հայրապետական Մայր Աթոռը նրա կարիքն է զգացել, երբ իր ժողովրդի ցավն ու դառը վիճակը կանչել են նրան, նա վազել է այդ ձայնի ետևից անվարան՝ հավատարիմ իր հոգևորականի կոչմանը և ազգային-եկեղեցական առաքելությունը:

Ազգիս Վեհափառ Հայրապետը երանաշնորհ Հայրապետի մահվան տասնամյակի առթիվ իր 9 մայիս 1884 թվակիր սրբատառ կոնդակում շատ գեղեցիկ, իրավ և ամբողջական ձևով է բնութագրել լուսահոգի Գևորգ Զ կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը. «Անձնավորություն մը, հոգիով ու մարմնով առողջ, մարակուռ, Հայոց աշխարհի լեռներուն նման: Նկարագիր մը հզոր ու ազնիվ, խոր զգացումով մարդկային բարոյականի բարձր արժեքներուն: Հավատավոր, աներեր հոգի և քաջ հովվապետ, ավելի քան վաթսուց տարիներու հավատարիմ ծառայությամբ: Ուխտյալ զինվոր և սյուն եկեղեցվո, և արթուն լուսարար ս. Էջմիածնի: Ժարտար նավապետ փոթորիկներու պահուն, անվեհեր առաջնորդ իր ժո-

դավաճանքի դեպի մավահանգիստը խաղաղ ափերու: Պաշտպան հայրենիաց, խիզախ, անհաճանք, հայկական հոգիի մարմնացած վահան: Հայրենասեր՝ իր ամբողջ էությունը, բովանդակ իր կյանքով, մտածումներու և տեսիլքներու իր ամբողջ աշխարհով, իր կենդանի գործով:

Հանգուցյալ Հայրապետը ծնվել է 1869 թվականի նոյեմբերի 2-ին, Նոր Նախիջևան քաղաքում, փականագործ-արհեստավորի համեստ, բայց ազգային-եկեղեցական ավանդություններով հարուստ և քարեպաշտ ընտանիքում:

Մանուկ Գևորգի կրթության գործում վրձնական դեր է կատարել հայ եկեղեցու ոգով և ազգային դաստիարակությամբ սնված ու մեծացած նրա քարեպաշտ մայրը՝ Կատարիկեն, որ իր զավակին մայրական կաթի հետ տվել է նաև եկեղեցապիտության և ազգասիրության շունչն ու ոգին:

Այնուամենայնիվ պատանի սովորում է Գևորգյան ճեմարանում, 1879—1889 թվականներին, և իր ուսումը կատարելավորելու Գերմանիայում, Հայացիզի համալսարանում:

Այս խոստումնալից, համալսարանական, երիտասարդ հոգևորականի առաջ բացվում է կյանքի ու գործունեության փառավոր ուղի:

Երջանկահիշատակ Հայրապետի կյանքի քոյր երեսներն ու գործունեության համագրվածները եղել են արդյունավետ ու բեղմնավոր: «Ահա ան,—գրում է Վեհափառ Հայրապետը,—մեկ ձեռքին թռնած խաչը՝ Զրիստոսի, մյուսին՝ գիրքը հայոց պատմության», ավելի քան վաթսուց տարիներ ծառայել է եկեղեցուն և ժողովրդին, որպես երիտասարդ վարդապետ, իբրև անձնիկ ու բարի հովիվ, որպես եպիսկոպոս և տեղական կաթողիկոսի և իբրև կաթողիկոս Ամենայն Հայոց, «ողորմութեամբ Աստուծոյ և կամօքն ազգին»:

Գևորգ Զ-ի գահակալությունը Լուսավորչի պատմական Աթոռի վրա մոր և խոստումնալից մի էջ բացեց հայ եկեղեցու պատմության նորագույն շրջանի տարեգրության մեջ:

1945 թվականի հունիսից Մայր Աթոռում գումարված ազգային-եկեղեցական ժողովը հայ եկեղեցու հետագա զարգացման և ս. Էջմիածնի ապագա եկեղեցաշեն ու հայրենամկեր գործունեության համար մի շարք կարևոր որոշումներ ընդունեց, որոնց կենսագործումը դրվեց նորընտիր Հայրապետի ուսերի վրա:

1946 թվականի ապրիլի 1-ին Ս. Տ. Գևորգ Զ կաթողիկոսը գրում է իր հայրապետական անդրաձեռն կոնդակը, որը փաստորեն

դեռ նախագիծ-ծրագիրն էր մեծամուն Հայրապետի ապագա գործունեության:

Երրոնագարդ Հայրապետը երիտասարդի խանդավառությամբ և պատմախաճատության բարձր զգացումով ձեռնամուխ է լինում Ամենայն Հայոց Հայրապետության առաջ կանգնած կարևոր և անհետաձգելի խնդիրների լուծմանը: Եվ նա արդարացում է հայ ժողովրդի և հայ եկեղեցու իր բարձր անձնավորության հանդեպ ցուցաբերած խոր հարգանքն ու անաչալ վստահությունը:

Երանաշնորհ Հայրապետի գահակալության տարիների առաջին և գեղեցիկ արդյունքներից մեկն է լինում հայ եկեղեցու միության և հայ ժողովրդի միասնականության իրագործումը Մայր Աթոռի հոգևոր, կանոնական ու գործարար կապի ամրապնդումը: Նա ինքը հանդիսացավ անձամբ հայ ազգային-եկեղեցական միասնության ուկեղեն կամուրջը Մայր Աթոռի, նվիրապետական Աթոռների և թեմերի, մայր հայրենիքի և սփյուռքի միջև:

1945 թվականի հունիսի 22-ին Մայր տաճարում գումարված ազգային-եկեղեցական ժողովում արտասանած նրա ճառը եղավ պատմական. «Պատգամավոր մեր զավակներն իրենց խոհական գործերով և իմաստուն խոսքերով հմայեցին մեզ: Հայ եկեղեցին ցարդ քաղաքական տեսակետով միասնական էր, բայց իրավական տեսակետով ոչ: Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոսը, նկատի չառնելով երկար ճամփորդության հետ կապված դժվարությունները, անձամբ եկավ իբրև ուխտավոր ու ճշմարիտ ու դրական միասնականության հիմքը դրավ: Այսօր տեսա համերաշխության ոգին վերադարձած մեր մեջ, որի համար պիտի աղոթեմ, որ այն մշտնջենական դառնա»:

Գևորգ Զ երանաշնորհ Հայրապետը ոչ միայն մեր ազգային-եկեղեցական միասնության առաքյալն էր, այլ նաև իրավ հայրենասեր:

«Հայը, բացի Սովետական Հայաստանից, չունի այլ հայրենիք,—պատգամում էր մեծ Հայրապետը:—Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կովան, բայց եթե մայր հայրենիքը, հայ եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը, ս. Էջմիածնի հայրապետական Աթոռով»:

Իսկ ի՞նչ է Ամենայն Հայոց Հայրապետությունը, ըստ լուսահոգի Հայրապետի ճշգրիտ ու պատկերավոր բնութագրությամբ. «Հայոց Հայրապետությունը հայի զգալուն սիրտն է եղել, որ դարձրել էր իրեն և նրա անհուն ցավերով և սակավ ուրախություններով: Հայոց Հայրապետությունը հայի ստեղծող միտքն է եղել, որ լուսավորված

քրիստոնեական լույսով, ստեղծել է գրականություն և գեղարվեստ՝ մեր փառքն ու պարծանքը: Հայոց Հայրապետությունը հայի ազնիվ և տոկուն կամքի արտահայտիչն է եղել, տալով առաքինության հերոսներ, աստվածային կամքի ճշմարիտ աշակերտներ: Հայոց Հայրապետությունը վեհ գաղափարների մի փուլն է, որ հյուսվել է Հայոց մեծ Հայրապետների ձեռքով: Եթե հիշենք Հայոց Հայրապետների շարքը, որպիսի՝ պատկառելի դեմքեր կտեսնենք, որոնց առաջ կիսմարհի մեր գլուխը:

Հայոց մեծ ու պատկառելի այդ հայրապետներից մեկը հանդիսացավ նաև ինքը՝ երանաշնորհ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսը, մեր այս պատմական ու պատասխանատու օրերին:

Վեհափառ Հայրապետի գահակալությունը Լուսավորչի պատմական Աթոռի վրա մեր օրերի բարոյ ու դժվար պայմաններում, իր բարձր անձնավորության բարոյական և հոգեկան հազվագյուտ բարեմասնություններով, իմաստուն ազգային-եկեղեցական քաղաքականությամբ, հեռատես, շրջահայաց և փորձված ղեկավարությամբ, մի գրի-խով բարձրացրեց Հայաստանյայց առաքելական եկեղեցու կենտրոնը ու Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության հեղինակությունն ու հմայքը թե՛ հայ կյանքում և թե՛ միջեկեղեցական մակարդակի վրա:

Կարելի չէ խմբագրական այս սեղմ տողերի մեջ ընդհանուր խոսքերով քննադրել երանաշնորհ Հայրապետի և մեծ հայրենասերի կյանքն ու գործունեությունը: Դա ապագա պատմաբանների գործն է: Այնուամենայնիվ ամսագրի՝ էջերում համառոտակի ներկայացվում է Լուսահոգի Հայրապետի կյանքի ու գործունեության ընդհանուր պատկերը:

Արդար է ազգիս Վեհափառ Հայրապետը, երբ Իդ մայիս 8 թվակիր սրբատառ կոնդակում գրում է. «Կտոնենք Գևորգ Զ Հայրապետի հիշատակը, իբրև հայ եկեղեցվո ու հայ ժողովուրդի հաղթանակի օր: Կտոնենք ուրախ, հպարտ սրտերով, որ Տերը մեր եկեղեցիին պարգևեր էր հովվապետ մը մեծ,

նման երանյալ Հայրապետներուն, որոնք պայծառ հետք են թողած Հայոց աշխարհի երկնակամարին վրա»:

Լուսահոգի կաթողիկոսի անունն ու գործունեությունը սերտորեն կապված են եղել նաև խաղաղության համաշխարհային շարժման կազմակերպման և մասնակցության հետ:

Պատահականություն չէր, որ Հայոց լուսարձակ Հայրապետը խաղաղության համար պայքարողների առաջին շարքերում է եղել. «Հոգեւորս Հայրապետը եղավ ու մընաց միջև իր կյանքի վերջը՝ նաև մեծ աղոթող մը և պայքարող մը վասն խաղաղության համայն աշխարհի: Իր հեղինակավոր խոսքը, իր արդար ծայրը տեսապես հնչեցին հոգի՝ Էջմիածնի սուրբ բարձունքներեն: Գեւորգ Զ կաթողիկոսի կյանքն ու գործը մարմնացումն իսկ եւն աստվածային խաղաղաբար կամքին ու հայոց պատմության հաղաթաղ ոգիին»,—գրում է Վեհափառ Հայրապետը:

«Սիրեցեք էջմիածինը... և ինձ հիշեցվք...»:

Լուսահոգի Հայրապետի վերջին ու սրբազան կտակն է այս, մահից մի քանի րոպե առաջ...

Երանաշնորհ Տ. Տ. Գևորգ Զ կիթողիկոսի մահվան 20-րդ տարելիցի առիթով, երբ ազգովին մեր հարգանքի և երախտագիտության սրտագին տուրքն ենք բերում նրա հիշատակին ու գործին, մխիթարված ենք խորապես, որ մեծանուն Հայրապետի գործը ամենայն մասամբ ապրում և բարգավաճում է նրա արժանավորագույն հաջորդ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրով:

Հավիտենական իր կյանքում հրճվում է մեծ ու բարի Հայրապետի անուշ հոգին, որ Մայր Աթոռում շարունակվում է իր գործը, փառավոր արդյունքներով, և իր խնկելի հիշատակը կենդանի ու վառ է ու Էջմիածնում, հայ եկեղեցու կամարների տակ և իր ժողովրդի երախտագետ սրտում:

«Տիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ՝
ՈՒՂՂՎԱԾ Ն. Ս. Տ. ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ

(12 մայիսի, կիրակի)

Այսօր ուրախ է մեր Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը, ուրախ է հայ հավատացյալ ժողովուրդը, ուրախ ենք մանավանդ մենք բոլորս, որ բուլղար օրթոդոքս մեր քույր եկեղեցու Պետ Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքը, Մեր շատ սիրեցյալ եղբայրը, իր հայրապետական առաջին այցելությունն է ստալիս Մեզ, իր ջրախմբի բարձրաստիճան հոգևորականներով:

Բերկրյալ սրտով բարի գալուստ ենք մաղթում Ձեզ և Ձեզ ողեկցող բարձրապատիվ հոգևոր դեմքերին:

Թող Աստված օրհնի Ձեր ներկայությունը սուրբ Էջմիածնում, թող Աստված օրհնի քրիստոնեական եղբայրությունը հայ և բուլղար ժողովուրդների:

Ձերդ Սրբություն,

Դարերի պատմություն ունի բարեկամությունը մեր երկու ժողովուրդների, բարեկամություն, որ իր կատարին է հասել մանավանդ անցյալ դարի երկրորդ կեսին, երբ քաջակորով բուլղարները և հայերը մարտնչել են միևնույն սուլթանական բռնակալության դեմ՝ հաճուն իրենց մարդկային սրբազան իրավունքների, հաճուն իրենց ազգային ազատագրության: Բուլղար հայրենասերների պայքարը հույս և հավատք է ներշնչել հայ հեղափոխականներին, որոնցից շատերը օգնություն և ապաստան են գտել բուլղարական հողի վրա և ուսման գեղի ձեռքից մասնակցել են Բուլղարիայի ազատագրության արդար գործին: Բիշ չէ թիվը հայ հեղափոխականների, որոնց անյունները այսօր էլ հանգչում են ազատ Բուլղարիայի բարձունքների վրա:

Նույն հեղափոխական իդեալներով, նույն ազատատենչ ոգով ներշնչ-



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԵՐԻԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ված, մեր երկու ժողովուրդների զավակները չխնայեցին իրենց արյունը և երկրորդ համաշխարհային Հայրենական մեծ պատերազմի տարիներին, հացուց փառապանք հաղթանակի ընդդեմ հիտլերյան բռնակալության:

Այդ պատմական հաղթանակի արևի ներքո այսօր քարգավաճում ու ծաղկում են մեր եղբայրական ժողովուրդները, ի մեծ մխիթարություն մեր Լեռնեցիների և մեզ բոլորիս:

Այսպիսի երջանիկ իրադրության մեջ ապրում ու գործում են հայոց և բուլղարաց եկեղեցիները՝ նվիրված իրենց հոգևոր առաքելության, նվիրված նաև աշխարհի խաղաղության ու ժողովուրդների քարեկամության ամրապնդման իդեալին, որ ամենանվիրական իղձն է այսօր ամբողջ մարդկային աշխարհի:

Հայաստանյայց եկեղեցին թե՛ իր մայր երկրի՝ Հայաստանի մեջ և թե՛ արևմտյան տարածքի վրա իր քրիստոնեական ու հայրենասիրական սրբազան պարտականությունն է համարում խաղաղասեր ուժերի առաջին շարքում լինել, իր քույր եկեղեցիների կողքին:

Խաղաղության համար մեզ հետ աղոթող, մեզ հետ գործող քույր եկեղեցիներից մեկն է նաև ձեր եկեղեցին, բուլղար օրթոդոքս եկեղեցին, այսօր Ձերոդ Արքեպիսկոպոսության ներքո: Մենք հույժ երջանիկ ենք հաստատելու այս երջանիկ իրադրությունը:

Ահապասիկ այնքան ամուր հիմքեր մեր երկու եկեղեցիների քարեկամության, այնքան ամուր հիմքեր մեր ժողովուրդների քարեկամության:

Ու այս բոլորի վրա պետք է ավելացնենք նաև մեր ժամանակաշրջանին հատուկ միջեկեղեցական էկումենիկ ոգին, որ հետզհետե առավել է զարգացում և ավելի ու ավելի իրար մոտեցնում քրիստոնեական եկեղեցիները, որպեսզի նրանք դառնան մի տիեզերական եղբայրություն, ինչպես մի է ինքը Քրիստոս և իր սուրբ Ավետարանը: Մենք հավատում ենք Քրիստոսի անուսով ժողովուրդների եղբայրության, և մեր եկեղեցին այդ հավատքով է, որ գործում կերպով մասնակցում է էկումենիկ շարժմանը:

Համոզված ենք նաև, որ էկումենիկ շարժումը կարող է և պետք է իր հեղինակավոր ու վճռական խոսքը ասի աշխարհի խաղաղության պահպանման և արդի մարդկությանը հուզող հարցերում: Մեր կարծիքով, էկումենիկ շարժումը հիմք ունենալով ամեն բանից վեր Քրիստոսի Ավետարանի ոգին, պետք է գործի հանուն խաղաղության, հանուն ընկերային արդարության և հավասարության, հանուն ճնշված ու շահագործված քաղաքացիների ազատագրման, հանուն մարդկային հիմնական իրավունքների պաշտպանության:

Այս ոգով վերանորոգված եկեղեցիները, միացած էկումենիկ տիեզերական շարժման մեջ, կխորհինք, թե առավել հարազատությամբ և ճշմարտությամբ պիտի կարողանան լուծել Ավետարանի պատգամների կենսագործմանը երկրի վրա, մարդկային աշխարհի մեջ:

Թող Տերը լուսավորի մեր ուղին և օգնի մեզ բոլորիս, որ իր կամքը կատարենք երկրի վրա:

Ձերոդ Արքեպիսկոպոս,

Այս մտածումներով և մանավանդ եղբայրական ամենաջերմ զգացումներով Մեր սիրտը Ձեզի կրանաք, կրկին քարի գալուստ մաղթելու Ձեզ և Ձեզ ընկերակցող բարձրապատիվ հոգևոր հայրերին, մաղթելով Ձեզ լիակատար անասան առողջություն և փալլուն հաջողություններ Ձեր պատրիսրքական առաքելության ճանապարհին՝ յի փառս բուլղար օրթոդոքս սուրբ և փառավոր եկեղեցու:



ԵՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐԷԻ
ԽՈՍՔԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

(12 մայիսի, կիրակի)

Չերդ Սրբություն վազգեմ Առաջին, սիրեցյալ եղբայր ի Տեր,
Հարգարժան հոգևոր հայրեր,
Մեծարգո պարոն կրոնից նախարար,
Աստվածասեր եղբայրներ և քույրեր,

Դեռևս գտնվում ենք Քրիստոսի Հարության լուսավոր տոնի բարերար
նառաքյալում, զատկական անչափելի բերկրանքի տպավորության ներքո:
Այս պատճառով Ձեզ ողջունում եմ հնավանդ քրիստոնեական հաղթական
խոսքով՝ Քրիստոս հարյալ:

Ջատկական ուրախության հետ մեկտեղ ապրում ենք մի ուրիշ ուրախու-
թյուն ևս՝ այսօրվա հաճելի և հուզիչ հանդիսության ուրախությունը:

Ուրախ ենք, որ գտնվում ենք հայկական օրհնյալ հողի վրա, որը մեր
գիտակցության մեջ արթնացնում է աստվածաշնչական և քրիստոնեական
հնագույն անցյալի նվիրական հիշատակներ: Այստեղ, հավերժական սպի-
տակափառ Արարատի բարձունքից, ըստ Աստվածաշնչի, հանգչել է Նոյի
տապանը, որտեղից աղավթին աշխարհին թերեց ձիթենու ճյուղը, որը մինչև
այսօր էլ մնում է որպես խորհրդանշան խաղաղության (ԾՃՆդոց Ը 4—11):

Այստեղ դարձյալ, ըստ ավանդության, հնչել է սուրբ առաքյալների Թա-
րևոսի և Բարթողիմեոսի ավետարանչական խոսքը:

Այստեղ է թափվել Հռիփսիմե և Գալանե սուրբ կույսերի և նրանց հավա-
տարիմ ընկերուհիների արյունը:

Այստեղ է քարոզել ս. Գրիգոր Լուսավորիչը՝ Հայոց առաջին Հայրապե-
տը, մեծ խոստովանողը և առաքելատիպ սուրբը, որի հիշատակը հարգում է
նաև մեր օրթոդոքս եկեղեցին (80 սեպտեմբեր): Ու տակավին բազում մար-
տիրոսներ, լուսավորիչներ, հայրապետներ ու սուրբեր:

Սակայն, մեր ուրախությունը հորդում է նաև այսօրվա աղոթքով, այս
հոյակապ տաճարում, ուր ձեր հավատավոր եկեղեցականների մասնակցու-
թյամբ հանդիսավոր եկեղեցական արարողություն կատարեցիք:

Հայ եկեղեցին ունի փառավոր ավանդություն և հոգևոր հարուստ ժա-
ւանգություն: Մենք գնահատում ենք ձեր եկեղեցին, որովհետև նա բոլոր
հնագույն արևելյան ոչ պրավոսլավ եկեղեցիների մեջ դավանաբանությամբ,



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՄԱՋԱՆԻՄ ՊԱՏՏՐԻԱՐԺ ԲՈՒԼՂԱՐ ԵՐԹՈՒՆԻՔԱՆ ԵԿԵԼԵՑՈՒ

կառուցվածքով, արարողությամբ և ավանդություններով ամենից ավելի մոտ է մեզ՝ արավոպալ դավանանքին հետևողներին:

Մենք սիրում ենք հայ ժողովրդին, նրա ազնվության, հաստատակամության, արիության և հանուն իր հավատքի նրա մարտիրոսության համար: Ու նաև նրա համար, որ նա իր պատմական ճակատագրով բախտակից է եղել մեզ: Թեև աշխարհագրականորեն հեռու ենք իրարից, սակայն պատմա-սանդորեն մերձավոր շատ կապեր ունենք: Հայ գաղթականներ կային հայկականներում դեռևս չորրորդ դարի վերջերի: Դարերից ի վեր բուլղարներն ու հայերը եղբայրաբար ապրում են բուլղարական հողի վրա:

Մենք հարգում ենք հայ եկեղեցին, նրա արժանավոր հովվապետների և հովիվների համար, որոնք աջակցել են մեր ժողովրդին ու մեր եկեղեցուն, թե՛ նրանց ծանր և տառապալից օրերին, օսմանյան լծի մերքո, և թե՛ մեր վերածննդի շրջանում:


Արտահայտելով մեր ջերմ գնահատանքը հայ եկեղեցու և արի հայ ժողովրդի հանդեպ, այսօր մենք բավարար հիմք և առիթ ունենք արտահայտելու նաև մեր խորին հարգանքը Ձերդ Սրբության անձնավորության հանդեպ, հայ եկեղեցու արժանավոր Գահակալիդ հանդեպ, Ամենայն Հայոց Հովվապետիդ և Գերագույն Կաթողիկոսիդ հանդեպ: Շուրջ 20 տարի, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ձեր պաշտոնավարության ընթացքում Դուք ստացաք մի-յազգային մեծ հեղինակություն վայելող հովվապետի անուն: Խաղաղության մարտիկների առաջավոր շարքերում, խաղաղասիրական բոլոր ձեռնարկներին Ձեր մասնակցությամբ, քրիստոնեական տարբեր եկեղեցիների մերձեցման և միավորման ի խնդիր Ձեր գործունեությամբ, ինչպես նաև հայ եկեղեցու շինության և բարեկարգության մասին Ձեր անդադրում հոգածությամբ ու ջանքերով, աշխարհում ցրված ու բաժանված Ձեր զավակներին հայրենական երդիկի տակ հավաքելու Ձեր անխոց ճիգերով, Դուք արժանավորապես շահեցիք քաղաքացիական հասարակության վստահությունն ու հարգանքը ու Ձեր ամբողջ հոտի ու հավատացյալ ժողովրդի խորունկ սերն ու որդիական հավատարմությունը:

Ձերդ Սրբություն,

Ապրում ենք նշանակալից մի ժամանակաշրջան, որն ընթանում է գաղութային ստրկությունից ազգային ազատագրության անցնելու նշանաբանով, տարբեր ազգությունների խաղաղ գոյակցության ու բաժանված եկեղեցիների մերձեցման ու միացման մի պատմաշրջան: Մենք, որ կոչված ենք խաղաղության ու հավատքի մեջ միավորման, չենք կարող անմասն և անտարբեր մնալ այս ձգտումների հանդեպ: Խաղաղության մեջ ապրելու ու եղբայրական հաղորդակցության մեջ գտնվելու մեր բաղձանքի արտահայտությունն է տեղական առանձին եկեղեցիների պետերի փոխայցելությունները: Այս է իմաստը նույնպես մեր ներկա այցելության: Արդեն երրորդ անգամն է, որ բուլղար օրթոդոքս եկեղեցու գահակալը եղբայրական այցելություն է տալիս հայ եկեղեցու գահակալին: Առաջին այցելությունը տեղի է ունեցել 1858-ին, իսկ երկրորդը՝ 1867-ին, իմ նախորդի՝ երջանկահիշատակ Կիրիլ Պատրիարքի օրով: Ի պատասխան, Ձերդ Սրբությունը մեր երկիր այցելեց 1865-ին: Ձեր այցելությունը լայն արձագանք գտավ մեզ մոտ ու հիշատակելի պիտի մնա մեր փոխհարաբերությունների պատմության մեջ:

Սիրելի հավատացյալներ ու Տիրոջով սիրելի հայ եղբայրներ,

Եղբայրական ողջույն ենք բերում նաև ձեզ ձեր հայ եղբայրներից, որոնք քնակվում են Բուլղարիայում: Ողջույններ ենք բերում նույնպես բուլղարացի ժողովրդից: Ձեզ բերում ու հաղորդում ենք նաև մեր օրթոդոքս եկեղեցու



Երանություններն ու ջերմագին մաղթանքները՝ առողջության, խաղաղ կյանքի և բարօրության, ձեր սպիտակասական երկրի համակողմանի վերելքի պայմաններում, ձեր երկրի ղեկավարներին, Սովետական Միության մեծ ընտանիքում:

Թող ամենակալ, ամենաբարի Աստված սուրբ Գրիգորի և ձեր բազում հայրենի սրբերի աղոթքներով ու երկմային բարեխոսությամբ պահպանի Ձերդ Սրբությանը, Ձեր գործակիցներին ու ձեր ժողովրդին՝ խաղաղ ու բարօր, հանուն երջանիկ մերկայի և է՛լ ավելի երջանիկ ապագայի. ամեն:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի եղբայրական հրավերով 1974 թ. մայիսի 10—15-ը Մայր Աթոռում էր գտնվում բուլղարական օրթոդոքս եկեղեցու Հովվապետ Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքը՝ ընկերակցությամբ Ստարա-Ջագորայի միտրոպոլիտ գերաշնորհ Բսմգրատիի, Մակարիոպոլի եպիսկոպոս գերաշնորհ Նիկոլայի, Մոսկվայի բուլղարական օրթոդոքս եկեղեցու ճերկայացուցիչ հագեշնորհ տ. Նեստոր վարդապետի և բարեշնորհ ավագ սարկավագ դոկտոր Վասիլ Վելյանովի:

Այս առթիվ Մայր Աթոռ էին ժամանել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ գերաշնորհ տ. Տիրայր եպիսկոպոսը և Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ տիար Օննիկ Ասլանյանը:

Մայիսի 10-ին Երևանի օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, գերաշնորհ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը և գերաշնորհ տ. Պարզև, տ. Հուսիկ, տ. Արսեն, տ. Գևորգ եպիսկոպոսները, ինչպես նաև Մայր Աթոռի պատասխանատու աշխատակիցներ:

Բուլղարական եկեղեցու Սրբազան Պատրիարքին օդանավակայանում դիմավորեցին նաև Հայկ. ՄԱՀ Միջխտորների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ տիար Սարգիս Գասպարյանը և տեղակալ տիար Սուրեն Հովհաննիսյանը:

Երկու Հայրապետները, շրջապատված իրենց հետևորդներով, հանդիսավոր շքերթով ժամանեցին Մայր Աթոռ, ուր Փրկչի Իջման սուրբ սեղանի առաջ ողջագուրվեցին և փոխանակեցին բարիգալստյան ու ողջույնի ջերմ խոսքեր:

Մայիսի 11-ին երկու Հովվապետները Մայր տաճարում ճերկա եղան երկույան ժամերգությամբ, այնուհետև՝ Էկումենիկ աղոթքին և հոգևոր համերգին՝ Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ:

Մայիսի 12-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետը Մայր տաճարում մատուցեց ս. պատարագ, որի ընթացքում ս. Սեղանին սպասավորում էին տ. Տիրայր և տ. Գևորգ եպիսկոպոսները ու Մայր Աթոռի հոգևորականաց դասը: Քարոզի պահին երկու Հովվապետները հանդես եկան եղբայրական փոխադարձ սիրո և հարգանքի բարեմաղթություններով:

Ա. պատարագից հետո՝ Վեհարանի գահաւարհում, ի պատիւ քուլարականաց եկեղեցու քարձրաստիճան հյուրերի, տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն, որին ներկա էին նաև հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը, տեղակալ տիար Սուրեն Հովհաննիսյանը, ինչպես նաև Երևանի մտավորական հասարակայնության ներկայացուցիչներ և հավատացյալների մի խումբ քաղաքացիներ: Ջերմ ողջերձով հանդես եկավ Հայոց Հայրապետը, որին նույն ջերմությամբ պատասխանեց քուլարական օրթոդոքս եկեղեցու Հովվապետը:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիւ Մայր Աթոռի քարձրաստիճան հոգևորական հյուրերի, ուր փոխանակվեցին քաժակաճառեր:

Մայիսի 14-ին Նորին Սրբությունները Իրենց շքանշաններով այցելեցին Մեծ եղեռնի հուշարձան, ինչպես նաև քուլար ժողովրդի մեծ զավակ, հեղափոխական-քաճառտեղծ Պելու Կ. Յավորովի արձան և զետեղեցին ծաղկեպսակներ:

Տիար Ս. Գասպարյանը, ի պատիւ քուլարական եկեղեցու պատվիրակության, տվեց պաշտոնական ճաշկերույթ:

Նույն օրը Հայկ. ՍՍՀ Միեկիստրների սովետի նախագահ տիար Գրիգոր Արզումանյանը ընդունեց Նորին Սրբություն Ս. Տ. Վազգեն Առաքինին, որը ներկայացրեց Իր մեծարգո հյուրին՝ Նորին Սրբություն քուլարական օրթոդոքս եկեղեցու Ս. Մաքսիմ Պատրիարքին:

Երեկոյան երկու Հայրապետները ներկա եղան հոգևոր ճեմարանում հյուրերի պատվին կազմակերպված ուսանողական հանդեսին:

Մայր Աթոռում գտնվելու օրերին մեծարգո հյուրերը այցելեցին Մայր տաճարի և Հին Վեհարանի թանգարանները, Վաղարշապատի պատմական վանքերը՝ ս. Հովսիսիմե, ս. Գայանե, Մատենադարան, Գառնի, Գեղարդի վանք, Սևանա լիճ, ս. Մեսրոպի շիրիմ Օշականում և մայրաքաղաքի այլ տեսարժան վայրեր:

Երեկոյան Վեհարանում տեղի ունեցավ եղբայրական տեսակցություն հայ և քուլարական եկեղեցիների Պետերի միջև, ուր գոհունակությամբ հաստատվեց, որ Հայաստանյայց առաքելական եկեղեցու և քուլարական օրթոդոքս եկեղեցու միջև գոյություն ունեց սերտ կապեր էկումենիկ գործակցության ոգով, ինչպես նաև հայ և քուլար ժողովուրդների միջև՝ եղբայրական սնկեղծ և դարավոր բարեկամություն, որը շարունակվում է մեր օրերում, և որի զարգացման և ամրապնդման համար աշխատում են երկու եկեղեցիները:

Երկու Հայրապետները հաստատեցին նաև, որ՝

ա) եկեղեցիների կոչումն է՝ գոհացում տալ մեր ժամանակաշրջանի այժմեական հարցերին՝ հանգցնել գոյություն ունեցող պատերազմի օջախները, պահպանել և ամրապնդել աշխարհի խաղաղությունը, նպաստել գաղութային ստրկության և ցեղային խտրականության վերացմանը և կենսագործել սոցիալական արդարությունը, եղբայրությունը և բարեկամությունը ժողովուրդների միջև:

Հայ առաքելական և քուլար օրթոդոքս եկեղեցիները ջանքեր են գործադրում այս ազնիվ ասպարեզում՝ գործոն մասնակցություն ցուցաբերելով խաղաղության ազգային կոմիտեներում, խաղաղասեր ուժերի համաշխարհային շարժման մեջ և խաղաղության համաշխարհային քրիստոնեական կազմակերպություններում:

բ) եկեղեցիները պետք է շարունակեն միմյանց ճանաչել էկումենիկ ոգով, որոնք այն ուղիները, որոնք ծառայում են խաղաղության ու փոխա-

դարձ համագործակցությանը և վկայեն աշխարհի առջև իրենց սերը և հավատքը ի Քրիստոս Հիսուս:

Յանկություն հայտնվեց, որ փոխայցելություններ լինեն երկու եկեղեցիների աստվածաբանական հաստատությունների միջև, փոխանակվի կրոնական գրականություն, և երկու եկեղեցիների մերկայացուցիչները փոխադարձաբար մասնակցեն մի շարք գիտական-աստվածաբանական հարցերի ուսումնասիրմանը, որ ծառայեր երկու եկեղեցիների միմյանց առավել լավ ճանաչմանը և մերձեցմանը:

Առյուծ հաղորդագրությունը խմբագրվեց և ստորագրվեց ս. Էջմիածնում 1974 թվականի մայիսի 14-ին:

ՄԱՔՍԻՄ

ՊԱՏՐԻԱՐԺ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ
ՕՐԹՈԴՈՋ ՆԿԵՂԵՑՈՒ

ՎԱԶԳԵՆ Ա

ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀՈՎՎԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԱՔՍԻՄ
ՊԱՏՐԻԱՐԷԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց կաթողիկոս **Տ. Տ. Վազգեն Ա**-ի եղբայրական սիրայիդ հրավերով սույն թվականի մայիսի 10-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Մայր Աթոռ ժամանեց քույրարական օրթողոքս եկեղեցու Պետ Նորին Արքուքուն **Տ. Մաքսիմ Պատրիարքը**:

Արքազան Պատրիարքին ողեկցում էին Ստարա-Ջազուրայի միտրոպոլիտ Բանգրատին, Մակարիոպոլի եպիսկոպոս գերաշնորհ տ. Նիկոլայը, Մոսկվայի քույրարական օրթողոքս եկեղեցու ներկայացուցիչ հոգեշնորհ տ. Նեստոր վարդապետը և քաղեշնորհ ավագ սարկավագ դոկտ. Վասիլ Վելյանովը:

Այս առթիվ նախապես Մայր Աթոռ էին ժամանել Դումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիրոսյանը և Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ տիար **ՕՃԵԻԿ Ասլանյանը**:

Մայիսի 10-ին, երեկոյան, Երևանի օդանավակայանում քույրարական քույր եկեղեցու Արքազան Պատրիարքին և նրա շքախմբին դիմավորեցին և ողջունեցին Ամենայն Հայոց Հայրապետը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, Ռուսաստանի թեմի առաջնորդ տ. Պարզև եպիսկոպոսը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպիսկոպոսը, Բուլղարիայի թեմական խորհրդի ատենապետ **ՕՃԵԻԿ Ասլանյանը**, տ. Մուշեղ և տ. Եզնիկ վարդապետները, Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարզև Շահրազյանը և Մայր Աթոռի պաշտոնեությունը:

Թանկագին հյուրերին օդանավակայանում դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Հայկ. ՍՍՀ Միջխտրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ տիար Սարգիս Գասպարյանը և տեղակալ տիար Սուրեն Հովհաննիսյանը:

Զափազանց հուզիչ էր Հայոց աշխարհում, սուրբ գրական այս հողի վրա, քույր եկեղեցիների Հովվապետների և Նրանց շքախմբի անդամների ջերմ ողջագուրումը: Նրանց եղբայրական համբույրի մեջ մեկ անգամ ևս նվիրա-



դործվեց Ռայ և քուղար եկեղեցիների և ժողովուրդների սիրո և բարեկամության ղեկավար կապը:

Վերջին 15 տարիների ընթացքում երրորդ անգամ էր, որ քուղարական օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը լինում էր Հայոց երկրում և Մայր Աթոռ ս. Էջմիածնում: 1858 թվականին և ապա 1867 թվականին Հայոց Հայրապետի Ռապերով Մայր Աթոռ էր այցելել Նորին Արքայություն Ռանգունյալ երջանկաթիշատակ Տ. Կիրիլ Պատրիարքը, Ռայ ժողովրդի և Հայաստանյայց եկեղեցու մեծ ու ազնիվ բարեկամը:

1865 թվականին Հայոց Հայրապետը քուղարական եկեղեցու Հովվապետի և սրբազան Սինդոի սիրալիր և ջերմ Ռապերով պատասխան այցելություն էր տվել քուղարական եկեղեցուն, քուղար քարի և քրիստոսասեր ժողովրդին և բարեկամ երկրին:

Այդ առթիվ կատարված Ռանդիպումները, եկեղեցիներում և պաշտոնական ընդունելությունների ժամանակ խանդավառ և ջերմ մթնոլորտում արտասանված ճառերը վերածվել էին քրիստոնեական եղբայրության սրբազան տոնի և ղեկավար դաշինքի: Երկու Հայրապետները միասին աղոթել էին ոչ միայն երկու եկեղեցիների և ժողովուրդների անքակտելի բարեկամության և գործակցության ամրապնդման համար, այլ նաև էկումենիկ ոգով՝ քրիստոնեական եկեղեցիների միության համար, հանուն ժողովուրդների ի Քրիստոս եղբայրության և աշխարհի խաղաղության:

Օղանավակայանում սրտառուչ ողջագութվելուց հետո երկու Հովվապետները Իրենց շքախմբերով և հանդիսավոր շքերթով առաջնորդվեցին ս. Էջմիածին:

Տոնականորեն հմշում էր Մայր տաճարի ավետավոր զանգերի զվարթ դողանքը:

Երկու Հայրապետները, եկեղեցական թափոքով ու «Հրաշափառ»-ով առաջնորդվեցին Մայր տաճար՝ հավատացյալ ժողովրդի խուռներամ քաղմության խանդավառ արտահայտությունների ներքո: Մայր տաճարում երկու Հայրապետները Փրկչի Իջման ս. սեղանի առաջ միասին աղոթեցին և կրկին անգամ ողջագութվեցին:

Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունելով և թարի գալուստ մաղթելով Մաքսիմ Պատրիարքին ու նրա շքախմբի անդամներին, ասաց.

ՎԵՀԱԾԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Գոհություն Աստուծո Ամենակալին, որ արժանի արեց մեզ այս սուրբ տաճարի կամարների ներքո վերստին հանդիպելու և սրտագինս ողջունելու Մեր սիրեցյալ Եղբորը, Նորին Արքայություն Մաքսիմ Պատրիարքին:

Պատմական այս սուրբ տաճարը, որ 12 դարերի մի անցյալ ունի, ավելի հաճախ ապրել է տխուր ու ծանր օրեր: Սակայն, փառք Աստուծո, այս վերջին 50 տարիների ընթացքում այս տաճարը մեր հավատացյալ ժողովրդի հետ միասին ապրում է ուրախության օրեր, մանավանդ երբ այսպիսի բացառիկ առիթներ է ունենում ընդունելու մեր քույր եկեղեցիների ղեկավար պետերին:

Այսօր մենք այստեղ բերկրյալ սրտով և անկեղծ սիրո զգացումներով ընդունում ենք Տ. Մաքսիմ Պատրիարքին և Նրան ողեկցող բարձրաստիճան ղեկավար հյուրերին:

Ծատ ուրախ ենք, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, և վստահ, որ Աստուծո օրհնությունը պիտի վայելենք միասին այս օրերին և մի անգամ ևս պիտի աղոթենք այս սուրբ Սեղանի առաջ մեր երկու եկեղեցիների բարգավաճման

համար, պիտի աղոթենք մեր երկու ժողովուրդների երջանկության համար, որոնք անցյալում այնքան դժբախտություններ ու տառապաքներ են կրել Օսմանյան կալուքության դաժան լծի տակ:

Միասին պիտի աղոթենք դարձյալ աշխարհի խաղաղության համար, որպեսզի երկրագնդի վրա ոչ մի տեղ այլևս չկրկնվեն անցյալի արյունոտ ողբերգությունները, և ժողովուրդները ապրեն ազատ ու երջանիկ որպես նույն երկնավոր Հոր՝ Աստուծո ազատ և հավասար զավակներ:

Կրկին անգամ ողջունում ենք Ձեր բարի ժամանումը ս. Էջմիածին և մաղթում, որ Աստված օրհնի մեր այս հանդիպումը:

Այնուհետև պատասխան ողջույնի խոսքով հանդես եկավ Ս. Մաքսիմ Պատրիարքը:

Տ. ՄԱԶՍԻՄ ՊԱՏՐԻԱՐԷԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՇԱՐՈՒՄ

«Ձերդ Սրբություն, Գերագնիվ Տեք եղբայր Վազգեն Առաջին, խորապես հրճվում ենք, որ գտնվում ենք ձեր օրհնյալ երկրում, ս. Էջմիածնում, ձեր Մայր տաճարի պատմական կամարների տակ, որպես Ձեր հյուրերը: Ուրախ ենք, որ դարձյալ բարեբախտ հնարավորությունն ունենք տեսնելու Ձեր դեմքը, շփման մեջ մտնելու ձեր հնագույն եկեղեցու, նրա դարավոր սրբությունների, նրա հոգևոր դասի և աստվածասեր ժողովրդի հետ:

Իմ և իմ ուղեկիցների անուհից սրտագին երախտագիտություն եմ հայտնում սույն այցելության կապակցությամբ մեզ ուղղված Ձեր եղբայրական հրավերի համար: Շնորհակալություն եմ հայտնում նույնպես քիչ առաջ մեզ ուղղված ողջույնների և բարի մաղթանքի խոսքերի համար:

Ուրախ ենք մեզ հետ քերելու և Ձերդ Սրբությանը հաղորդելու քուղարական օրթողոքս եկեղեցու սրբազան Սինոդի, մեր աշխատասեր և խաղաղասեր քուղար ժողովրդի, ինչպես նաև Բուղարիայում բնակվող հայերի սրտագին ողջույնները:

Կասկած չունենք, որ ձեր երկրում մեր այցելությունը Ձեր եղբայրական սիրավիր հոգածության և տեղական հարգո հասարակության, ձեր զինվորյալ կղերի ու հավատացյալ ժողովրդի ուշադրության ներքո, մեզ համար իսկապես հաճելի և օգտակար պիտի լինի:

Միաժամանակ վստահություն ենք հայտնում, որ մեր սույն այցելությունը պիտի հանդիսանա համեստ, բայց օգտակար ու էական մի նպաստ մեր երկու եկեղեցիների բարվոք հարաբերությունների ամրապնդման և խորացման, ավելի ևս սերտացնելու համար մեր ժողովուրդների դարավոր կապերը՝ ի նպաստ աշխարհի խաղաղության:

Ամենողորմ և ամենակալ Աստված թող օրհնի մեր համատեղ ջանքերը ու դրանք պսակի ցանկալի հաջողություններով՝ ի փառս Իրեն, հերջամկություն մեր ժողովուրդների ու ամբողջ աշխարհի:

«Քրիստոս յարեառ»:

Այնուհետև երկու Հայրապետները Իրենց շքախմբերով և եկեղեցական թափոռով առաջնորդվեցին Վեհարան, ուր տեղի ունեցավ ջերմ ու սրտագին գրույց երկու Հովվապետների և Նրանց շքախմբի անդամների միջև:

Ավելի ուշ Մայր Աթոռի հարգարժան հյուրերը Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ այցելեցին Մայր տաճարի եկեղեցական արվեստի թանգարան, Հիմ Վեհարանի հայրապետական թանգարան և ապա Նոր Վեհարանի պատկերասրահ-թանգարան:

Տ. Մաքսիմ Պատրիարքը, իր շքախմբի անդամներով, Մայր Աթոռում գտնվելու օրերին հյուրընկալվեց Երևանի հայրապետական վիլայում:

ՈՒՍՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ Ա. ԳԵՂԱՐՅԻ ՎԱՆՔ

Մայիսի 11-ին, շաբաթ օրը, Տ. Մաքսիմ Պատրիարքը իր շքախմբի անդամներով այցելեց ա. Գեղարդի վանք: Սրբազան Պատրիարքին ողջեցում էին տ. Կոմիտաս, տ. Պարգև, տ. Տիրայր, տ. Գևորգ սրբազանները և տ. Հակոբ քահանա Գյուլյանը:

Հայ հոգևոր մշակույթի կենտրոն հանդիսացող պատմական այս հոշակավոր վանքի մեծ դարբասի առաջ Տ. Մաքսիմ Պատրիարքին ու նրա շքախմբի բոլոր անդամներին աղ ու հացով դիմավորեցին վանքի վանահայր տ. Դանիել վարդապետ Շամյանը և վանական միաբանությունն ու պաշտոնեությունը:

Հարգարժան հյուրերը զանգերի զվարթ դողանքի ներքո առաջնորդվեցին հնադարյան վանքի տաճարից ներս, ուր կատարեցին իրենց աղոթքն ու ուխտը: Այնուհետև մեծարգո հյուրերին պատմական մանրամասն տեղեկություններ տրվեցին ա. Գեղարդա վանքի մասին, որպես Հայաստանում 18-րդ դարի հոգևոր տիպի բարձրագույն ուսումնարանի և հայ մշակույթի փառավոր օջախներից մեկի:

Ա. Գեղարդա վանքում միաբանության կողմից ջերմորեն հյուրասիրվելուց հետո բարձրաստիճան հյուրերը հրաժեշտ առան ու մեկնեցին անմոռանալի տպավորություններով:

Դեպի Երևան իրենց վերադարձի ճանապարհի վրա Մայր Աթոռի թանկահին հյուրերը այցելեցին Գառնիի վերականգնվող հեթանոսական տաճար, որը Հայաստանում հելլենիստական շրջանից մնացած Ա դարի միակ պատմական մեծարժեք ու բարձրարվեստ հուշարձանն է հանդիսանում: Գառնիի սույն պատմական հուշարձանը վերականգնվում ու վերանորոգվում է պետական միջոցներով: Տաճարի ամբողջական վերականգնման աշխատանքները, որոնք շարունակվում են շուրջ վեց տարուց ի վեր, ավարտվելու վրա են:

ԿԻՐԱԿԱՄՏԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ, ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում երկու Հայրապետները ներկա եղան կիրակամտի ժամերգությանը, որը կատարվեց Մայր Աթոռի միաբանների և հոգևոր ճեմարանի ուսանողների մասնակցությամբ:

Այնուհետև տեղի ունեցավ էկումենիկ աղոթք, որին իրենց մասնակցությունը բերին, երգերով ու աղոթքներով, բուլղարական եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչները:

Մայր տաճարում կատարված էկումենիկ սույն աղոթքի մեջ հարազատորեն արտահայտվում էր մեր ժամանակները հատկանշող միջեկեղեցական այն առողջ շարժումը, որը ձգտում է քրիստոնեական եկեղեցիների մերձեցման և եղբայրական համագործակցության Քրիստոսի ընդհանրական եկեղեցու փառքի համար:

Կիրակամտի ժամերգության և էկումենիկ աղոթքի ավարտին Մայր տաճարում տեղի ունեցավ հոգևոր համերգ՝ ի պատիվ Տ. Մաքսիմ Պատրիարքի և նրա շքախմբի անդամների: Հոգևոր համերգի ծրագրում կային հատված-

ներ հայկական, ռուսական, բուլղարական և արևմտաեվրոպական հոգևոր երաժշտությունից:

Մայր տաճարի երգչախումբը, խմբավար Խորեն Մելիսանեջյանի ղեկավարությամբ, խոր ապրումով և արվեստի մուրք զգացողությամբ կատարեց Կոմիտաս Վարդապետի «Խորհուրդ խորին»-ը, «Գովեա, Երուսաղեմ, Կոմիտաս Վարդապետի «Քրիստոս պատարագեալ»-ը, Մակար Եկմայանի «Յորժամ»-ը, զՏեր»-ը, «Քրիստոս պատարագեալ»-ը, Մակար Եկմայանի «Յորժամ»-ը, զՏեր»-ը, «Քրիստոս պատարագեալ»-ը և միջնադարյան «Խնկի ծառ» տաղը: Ոգաց Դուրյանի «Քրիստոս յարեալ»-ը և միջնադարյան «Խնկի ծառ» տաղը: Ապա տաճարի կամարների տակ խորհրդավոր հնչեցին Պ. Չալկովսկու «Գոսպոդի, պոմիլույ»-ը, Կաստալսկու «Մեդոլետիե»-ն, Դմ. Բորտիանսկու «Գ-րդ կոնցերտը, Սմիռնովի «Խվալիտե իմյա Գոսպոդնիա»-ն, բուլղարական «Վրվի ցարոդե վզոդեցի» հոգևոր երգը (մշակումը՝ Ալ. Հարությունյանի), Բախի «Տոկատտա»-ն և Բախ-Գունդի «Ավե Մարիա»-ն:

Հոգևոր համերգի ընթացքում մեներգներով հանդես եկան Մայր տաճարի երգչախմբի մենակատարուհիներ Լուսինե Զաքարյանը, Մարիա Գեղումին և մենակատար Վաղերի Հարությունյանը: Երգեհոնով ընկերակցում էր երգեհոնահար Լևոն Աբրահամյանը:

Հոգևոր երաժշտության սույն համերգի ներշնչող մթնոլորտում ներկացների հոգիները մի անգամ ևս վերացան դեպի քրիստոնեական եղբայրության սրբազան բարձունքները՝ «յերկիր խաղաղություն եւ ի մարդիկ հաճութիւն» սուրբ Ավետարանի աստվածատուր պատգամների խորհրդի մեջ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Մայիսի 12-ին, կիրակի օրը, Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց Հայոց Հայրապետը:

«Ուրախ լեր, սուրբ եկեղեցի հայոց»:

Այսօր սոն է Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հավատացյալ հայ ժողովրդի համար: Առավոտյան ժամը 10-ին Հայոց Հայրապետը քահանայապետական լրիվ զգեստավորման մեջ, ամպհովանու տակ և ընկերակցությամբ Տ. Մաքսիմ Պատրիարքի և նրա շքախմբի անդամների ու Մայր Աթոռի ողջ միաբանության, հանդիսավոր շքերթով, երգ ու աղոթքով, Մայր տաճարի զանգերի ավետավոր ու խնդազին դողանքի տակ առաջնորդվեց Մայր տաճար՝ օրվա հանդիսության առթիվ մատուցելու քրիստոնեական եղբայրության սուրբ պատարագը:

Վեհաբանից դեպի Մայր տաճար ձգվող շքերթի երկու կողմերում կանգնած քաղմությունը խանդավառ արտահայտություններով էր դիմավորում երկու Հայրապետներին և հոգևորականաց դասին:

Մայր տաճարը զարդարվել էր տոնականորեն: Ամենուրեք խուճկ, աղոթք և երկյուղածություն:

Ավագ բեմի առջև, ձախակողմյան դասում, Տ. Մաքսիմ Պատրիարքի համար դրված էր առանձին պատրիարքական աթոռ:

Ակսվեց հայրապետական սուրբ պատարագը: Ա. Սեդանին սպասավորում էին տ. Տիրայր և տ. Գևորգ եպիսկոպոսները, քահանայից դասը և Մայր Աթոռի ևարկավագաց ողջ խումբը:

Սուրբ պատարագի կոմիտասյան երգեցողությունը կատարում էր Մայր տաճարի երգչախումբը՝ խմբավար Խորեն Մելիսանեջյանի շնորհալի ղեկավարությամբ:

«Հայր մեր»-ից ուռաջ քաղողեց Վեհափառ Հայրապետը «Քրիստոս յարեալ ի մեռելոց» բնաբանով՝ ողջունելով նաև Մայր Աթոռում ներկայու-



թյունը բուլղարական օրթոդոքս քույր եկեղեցու պատվիրակության՝ գլխավորությամբ Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքի:

Իր քաղաքի ավարտին Հայոց Հայրապետը եղբայրորեն Ավագ սեղան հրավիրեց Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքին՝ իր ողջույնն ու զրհմությունը տալու հայ հավատացյալ ժողովրդին:

Հուզիչ էր Ավագ ս. սեղանի թեմի վրա երկու Հայրապետների ի հրիստոս եղբայրության և սիրո ողջագոյությունը:

Նորին Սրբությունը նախ իր և իր շքախմբի անդամների անունից սրբազին շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետի եղբայրական հրավերի, ջերմ դիմավորման և ողջույնի բարեմաղթությունների համար ու ապա ասաց.

«Մեզ հետ ենք բերում ու անձամբ Ձեզ ենք հաղորդում Մեր, բուլղարական օրթոդոքս եկեղեցու և նրա սրբազան Սինոդի, մեր հավատացյալ աշխատասեր ու խաղաղասեր բուլղար ժողովրդի, ինչպես նաև Բուլղարիայում ապրող հայերի սրտազին ողջույնները:

Կասկած չունենք, որ Հայոց այս հիմնավորը երկրում և ս. Էջմիածնում մեր ներկայությունը, Ձեր եղբայրական սիրալից հոգածության ներքո, Մեզ համար իսկապես հաճելի և օգտակար պիտի հանդիսանա: Վստահ ենք միաժամանակ, որ Մեր սույն այցելությունը համեստ, բայց օգտակար ու կարևոր մի նպաստ պիտի բերի մեր երկու եկեղեցիների, բուլղար և հայ ժողովուրդների բարվոք և դարավոր բարեկամության ամրապնդմանն ու խորացմանը հօգուտ նաև աշխարհի խաղաղության:

Թող Աստված օրհնի մեր այս հանդիպումը Իր փառքի համար, մեր երկու ժողովուրդների երջանկության և աշխարհի բարօրության համար»:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Ս. պատարագի ավարտին երկու Հովվապետները եկեղեցական թափոքով ու ամպհովանու տակ առաջնորդվեցին Վեհարանի գահասրահ, ուր տեղի ունեցավ մասնավոր ընդունելություն:

Հայոց Հայրապետը բազմեց Իր գահի վրա, իսկ Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքը՝ իր համար դրված պատրիարքական մասնավոր գահի վրա: Գահասրահում ներկա էին երկու քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականները, Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնությունը, Մայր տաճարի երգեցիկ խումբը և հավատացյալ ժողովրդի մի հոծ բազմություն:

Գահասրահում էից նաև Հայկական ՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Այս հանդիսավոր առիթով Հայոց Հայրապետը կրկին անգամ ողջունեց և բարի գալուստ մաղթեց բուլղարական օրթոդոքս եկեղեցու հոգևոր Պետին ու նրա շքախմբի անդամներին, ջերմ ու բուխնդակալից ուղերձով (Տես «Էջմիածին» ամսագիր, 1974 թ., № Ե, էջ 10):

Այնուհետև հանդես եկավ Տ. Մաքսիմ Պատրիարքը Հայոց Հայրապետին ուղղված սրտազին խոսքով (Տես նույնը, էջ 12):

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՐԿԵՐՈՒՅԹ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ժամը 15.30-ին Վեհարանի սեղանատանը, ի պատիվ Տ. Մաքսիմ Պատրիարքի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ մասնակցությամբ ալեյի քան երեսուն հրավիրյալների:

Որոշված ժամին երկու Հայրապետները մուտք գործեցին սեղանատուն:
Սեղանն օրհնեց Հայոց Հայրապետը: Պատվո սեղանի շուրջ տեղ գրավեցին Հայոց Հայրապետը, Բողոքարիայի Պատրիարքը և տիար Ս. Գասպարյանը:

Պաշտոնական սույն ճաշերույթին ներկա էին միտրոպոլիտ Բանգրատին, տ. Նիկողայ եպիսկոպոսը, տ. Նեստոր վարդապետը, Վասիլ Վելյամով սարկավագը, տ. Կոմիտաս, տ. Պարգև, տ. Հուսիկ, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Փետրոզ սրբազանները, տ. Մուշեղ, տ. Արիս, տ. Աղամ, տ. Եզնիկ վարդապետները, տ. Հակոբ քհն. Գյուլչյանը, Սարգիս սրկ. Սարգսյանը:

Ծաշկերույթին ներկա էին նաև տիար Ս. Հովհաննիսյանը, տիար Օճնիկ Աղաջյանը, Ա. Հատիսյանը, Պ. Շահբազյանը և այլ հրավիրյալներ:

Սեղանը վերածվեց ճշմարտապես քրիստոնեական սիրո սեղանի: Սրտագին ու հայրենասիրական ջերմ մթնոլորտում փոխանակվեցին ողջույնի ու բարիգալստյան բաժակաճառեր:

Հայոց Հայրապետը առաջին բաժակն առաջարկեց օրվա պատվավոր հյուրի՝ Ս. Մաքսիմ Պատրիարքի կենացը, բարեմաղթելով բուղարական քույր եկեղեցուն անասանությունն, պայծառությունն Նորին Արքայության գահակալության օրերին, բուլղար հավատացյալ ազնիվ ու բարի ժողովրդին՝ երջանկություն, բարգավաճում, և բուլղարական հայրենիքին՝ բարօրություն:

Հայոց Հայրապետը Իր ելույթում մի ամգամ ևս վեր հանեց բուլղարական և հայ եկեղեցիների ու ժողովուրդների դարավոր քարեկամության պատմական ճշանակությունը:

Տ. Մաքսիմ Պատրիարքը երկրորդ բաժակն առաջարկեց խմել Մայր Աթոռ ս. Էջմիածնի անասանության և Հայոց Հայրապետի կյանքի արևշատության համար, հետևյալ գրավոր ուղերձով.

«Զերդ Արքություն, գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր, մեծարգո պրն. Գասպարյան, սիրելի եղբայրներ և քույրեր, սիրելի սեղանակիցներ,

Առաջին անգամ չէ, որ գտնվում եմ Հայաստանում, որպես հայ եկեղեցու Նորին Արքություն կաթողիկոս-Պատրիարքի հյուրը: Երջանկահիշատակ Կիրիլ Պատրիարքի պաշտոնական այցելության ժամանակ ես առաջին այցելությունս կատարեցի ս. Էջմիածին, որպես աթոռակալ Մոսկվայի բուլղարասյան եկեղեցու՝ բախտը ունենալով մաս կազմելու մեր պատվիրակությանը, ու ամբողջ սրտով ապրեցի զորեղ և հուզիչ պահեր, որ պարզեց ինձ այդ չափազանց հաճելի այցելությունը: Անջնջելի են այդ օրերի իմ հուշերը ձեր գեղեցիկ երկրից, անմոռանալի է այն տպավորությունը, որ ունեցա Նորին Արքություն Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, Նրա նախաձեռնությամբ ղործակիցների և բարեկամ ու աշխատասեր հայ ժողովրդի կողմից ցույց տրված սրտագին հյուրընկալությունից:

Սրտառուչ այն ուշադրությունը, որով շրջապատված եմք այս օրերին, մեծապես ուրախացնում է մեզ: Այն չափազանցված հարգանք չէ, այլ անկեղծ ու ջերմ գուրգուրանք, որը բխում է բոլոր մեզ շրջապատողների սրտերի խորքից:

Սույն եղբայրական սիրո սեղանի շուրջ ամենից առաջ երախտապարտ եմ զգում ինձ Նորին Արքության հանդեպ, որպես հայ եկեղեցու հյուր, որպես բուլղարական եկեղեցու պատվիրակության ղեկավար՝ սիրալիր հրավերի համար: Այսպիսով, թանկագին մի առիթ ևս ստեղծվեց՝ աշխարհի սուրբ արտահայտելու այն մերձավոր քարեկամությունը, որ գոյություն ունի մեր երկու եկեղեցիների գահակալների ու բնակամարտ մեզ՝ մեր երկու ժողովուրդների

րի միջև: Ի սրտե շնորհակալ եմ Նորին Արքայություն կաթողիկոս-Պատրիարքին, այն եղբայրական զգացումների համար, որ Նա տածում է մեր ժողովրդի և մեր ա. եկեղեցու հանդեպ: Անձնապես հուզված եմ Նորին Արքայության եղբայրական ուշադրությունից, երբ երեք տարի առաջ Երկայացուցչական մի պատվիրակություն ուղարկեց Բուլղարիա՝ որպես բուլղարական օրթոդոքս սուրբ եկեղեցու զահակալ ընտրության և զահակալության մասնակցելու և այդ առթիվ Իր եղբարական ողջույններն ու բարեմաղթություններն արտահայտելու համար:

Զերդ Արքայություն,

Զեզ ճանաչում եմ իմ երիտասարդական օրերից, ճանաչում եմ Զեր արժանիքները, ու հաճելի է ինձ հաստատել հայ եկեղեցու ծաղկումը Զեր իմաստուն առաջնորդության ներքո, որպես բնական արդյունք Երկնավոր Հոր առատաձեռն օրհնության ու Տիրոջ այգու մեջ Զեր եռանդուն ջանքերի: Հայ եկեղեցին, որպես սփյուռքահայերի պահպանման-մայր, մրանց մեջ կենդանի է պահում Աստուծո հանդեպ հավատը ու ձեր հայրենիքի հանդեպ սերը: Երջանիկ եմ, որ հյուրն եմ հայրենակներ մի եկեղեցու, որի գործերը վկայում են պարտականության կատարումը հանդեպ Գերագույն Հովվապետի ու հանդեպ աշխատանքի և խաղաղ հայ ժողովրդի:

Մեր երկու ժողովուրդները եղբայրացած են վաղուց: Պատմական ճակատագիրը մրանց այնքան մոտեցրել է միմյանց: Ակնհայտ են այն մղումները, որոնք պայմանավորել են մրանց փոխադարձ սերը և ծանր փորձությունների ժամանակ մրանց մոտեցրել են միմյանց փոխադարձ օգնության համար: Այս իսկ պատճառով շատ բնական էր, որ մեր մեծ բանաստեղծ Պ. Կ. Յավորովի բանաստեղծական քնարը երգեր հայ հերոս և մարտիրոս ժողովրդի թշվառ պանդուխտների չարչարանքն ու տառապանքները: Մինչև այսօր էլ յուրաքանչյուր բուլղարացու սիրտը բաբախում է Յավորովի բանաստեղծության ուրթով, եղբարական հայ ժողովրդի հանդեպ սիրո ուրթով:

Մեր ժողովուրդների բարեկամությունը ամրապնդվում է նաև մեր մեր սերունդների ավելի երջանիկ ապագայի կերտման համար մրանց համաճանաչման ձգտումով: Այս շինարար աշխատանքի հաջողության առաջին պայմանը խաղաղությունն է: Ինչ էլ որ ձեռք բերես, երբ պակասում է խաղաղությունը, ներկա ռազմական տեխնիկայի պայմանների տակ մի ակնթարթում կարող է մոխրի վերածվել: Այս պատճառով մեր եկեղեցիներն ու ժողովուրդները համոզումով խաղաղություն են քարոզում ու եռանդով աշխատում, որպեսզի երկրագնդի բոլոր ժողովուրդները ձեռք բերեն այն: Զեր մայրաքաղաքում ու ավելի փոքր բնակավայրերում ծավալված շինարարությունը, որ են հնարավորություն ունեցա տեսնելու, նույնպես վկայում են, որ խաղաղության գործը, որի մարտիկների առաջավոր դիրքերում կանգնած է ՍՍՀ Միությունը, արդար է ու պիտի հաղթի չարի և խավարի ուժերին:

Նորին Արքայություն սիրելի Կաթողիկոս-Պատրիարք Վազգեն Ա-ի համար Աստուծոց հայցում եմ արևելատություն, առողջություն և ուժ, որպեսզի նույն մախանձախնդրությամբ կատարի Իր եկեղեցանկեր և հայրենասիրական ծառայությունը:

Եղբայր հայ ժողովրդին մաղթում եմ առաջադիմություն և վերելք շինարարության ասպարեզում՝ հանուն է՛լ ավելի երջանիկ ապագայի:

Բոլոր սեղանակիցների կենացը:

Հայոց Հայրապետը երրորդ քաժակն առաջարկեց խմել Տ. Մարտին Պատրիարքի շքախմբի անդամների կենացը՝ շեշտելով յուրաքանչյուրի հոգե-

վոր ու անձնային ծառայությունը իրենց սուրբ եկեղեցուն, բոլորն էլ ընտրյալ հոգիներ, որոնք Տ. Մեսրոպ Պատրիարքի ղեկավարության և օրհնության ներքո առաքելական-հայրենասիրական փառավոր գործ են կատարում ի փառս Քրիստոսի և ի բարօրություն հայրենյաց:

Այնուհետև Հայոց Հայրապետը ջերմ սրտով բաժակ առաջարկեց ընդունելությանը ներկա պրն. պրն. Ս. Գասպարյանի և Ս. Հովհաննիսյանի և ի դեմս նրանց՝ հայրենի բարեխմամ կառավարության կենացը:

Այս առթիվ Հայոց Հայրապետը երախտագիտության և շնորհակալության սրտագին խոսք ուղղեց հայրենի կառավարության ներկայացուցիչ, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանի, որը, հանուն հայրենի կառավարության, միշտ իր բարոյական ու գործնական օժանդակությունն է բերել Հայոց Հայրապետին, նրա գահակալության համարյա ողջ տևողության ժամանակ՝ իր պաշտոնավարության ավելի քան 14 տարիների ընթացքում, Մայր Աթոռում կատարվող եկեղեցական, մշակութային, շինարարական վերանորոգչական աշխատանքներում, ինչպես նաև միջեկեղեցական զանազան հարցերում:

Խոսք առնելով պրն. Ս. Գասպարյանը շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետի ջերմ խոսքերի համար և հայրենի կառավարության, եկեղեցական խորհրդի ու իր անունից ողջունեց ներկայությունը բուլղարական եկեղեցու Պատրիարքի և նրա շքախմբի անդամների և մասնավորապես շեշտեց ուս, հայ, բուլղար ժողովուրդների պատմական ճակատագրերի ընդհանրությունը, նրանց միասնական պայքարը հանուն իրենց ազատության և այդ պայքարում կոփված նրանց դարավոր ու անքակտելի բարեկամությունը:

ԱՅՑՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռի հարգարժան հյուրերը մայիսի 12-ին, երեկոյան ժամը 18-ին, ուխտի գնացին Օշական, ս. Մեսրոպ Մաշտոցի շիրմի առաջ խոնարհվելու և աղոթելու համար:

Մայիսի 18-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, երկու Հայրապետները իրենց շքախմբերով ուղևորվեցին Սևանա լիճ և այցելեցին Սևանի պատմական վանքերը: Ապա կեսօրվա ճաշը կատարեցին լճափում, «Աղթամար» հյուրանոցում:

Մայիսի 14-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, երկու Հայրապետները իրենց շքախմբի անդամների ուղեկցությամբ այցելեցին Երևանում ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, ուր նրանց ջերմորեն ու հարգալից մեծարանքով ընդունեց Մատենադարանի տնօրեն դոկտոր-պրոֆեսոր Լևոն Խաչիկյանը՝ սույն հաստատության ղեկավարության այլ անդամներով և գիտնական աշխատակիցներով:

Մատենադարանում հյուրերը մեծ հիացմունքով ծանոթացան հայ մշակույթի, արվեստի, պատմության և գիտության անկրկնելի գանձերին և ապա երախտագիտության և գոհունակության խոր զգացումներով դիտեցին այստեղ գործարանքով պահվող բուլղարական մշակույթի և դպրության վերաբերյալ թանկագին հիշատակարանները և պատմական փաստաթղթերը:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, երկու Հայրապետները իրենց շքախմբերով այցելեցին հոգևոր ճեմարան ու ներկա եղան կազմակերպված ուսանողական հանդեսին:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս Ծ. վարդապետը, հանում տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության, քարիզալստյան և ողջույնի հետևյալ խոսքով դիմեց քույր եկեղեցու մեծարգո հյուրերին.

«Այսօր պատմական մի օր է մեր եկեղեցու համար, որովհետև բացառիկ պատիվն ու հաճույքն ունենք հոգևոր ճեմարանի հարկի տակ ընդունելու Մայր Աթոռի քարծրաստիճան հյուրին՝ բուլղարական պրավոսլավ եկեղեցու Պետին՝ Ամենապատիվ Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքին ու նրա շախմբի անդամներին, որոնք արդեն մի քանի օրից ի վեր գտնվում են ս. Էջմիածնում և Սովետական Հայաստանում, Հայոց Հայրապետի հրավերով:

Կասկածից վեր է, որ այս այցելությանը վերանորոգվում են հայ և բուլղար ժողովուրդների պատմական կապերը, որոնք գալիս են դարերի խորքից: Մեր երկու ժողովուրդներն էլ նույն ճակատագրով են տառապել և հեծել Բյուզանդիայի և ապա օսմանյան լծի ներքո: 1878 թ. ռուս-թուրքական պատերազմով բուլղար ժողովուրդը վերջապես ազատագրվեց օսմանյան լծից՝ յիրաճալով իր անկախությանը, իսկ հայ ժողովուրդը շարունակեց ապրել իր տխուր կյանքը օտար տիրապետության տակ, մինչև համաշխարհային առաջին սլատերազմը, երբ սուլթանական Թուրքիան ցեղասպանության ոճրածին մի ծրագիր գործադրեց՝ կոտորելով շուրջ երկու միլիոն հայեր, որոնց թվում՝ հազարավոր անմեղ հոգևորականներ: Հրկիզվեցին ու քանդվեցին բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ: Դատարկվեց ամբողջ Արևմտյան Հայաստանը, ուր դարերով ապրել և ստեղծագործել էր հայ ժողովուրդը: Սակայն, հակառակ այս տխուր իրողության ու նահատակության, հաւ ժողովուրդը բուլղար քաջարի ժողովրդի նման, 1920 թվականին հերոսական խարտչումներից հետո, ստեղծեց ներկա Սովետական Հայաստանը՝ ռուս բարի և ազնիվ ժողովրդի եղբայրական անջահախնդիր օգնությամբ, ուղեւտական բազմազգ ժողովուրդների մեծ ընտանիքում:

Ինչպես բուլղարացի ժողովուրդը, հայ ժողովուրդը ևս երախտապարտ է ռուս ժողովրդին՝ նրա եղբայրական օգնության և պաշտպանության համար: Մոռացած անցյալի տխուր ողբերգություններն ու նահատակությունները, ժամանակ է, որ առավել ևս զորանան ու ամրապնդվեն հոգևոր ու բարեկամական կապերը բուլղար և հայ ժողովուրդների միջև, մանավանդ բուլղար և հայ եկեղեցիների միջև: Այս նպատակով կարևոր է հոգևոր դպրանոցների մեր ուսանողների մեջ սերմանել այն, ինչ որ բարի է և ազնիվ ու ծառայում է քրիստոնեական եղբայրակցության հաստատմանը, քույր եկեղեցիների միջև:

Ուրախ ենք, որ Ամենապատիվ Սրբազան Պատրիարքին ուղեկցում են նաև Բանգրատի միտրոպոլիտը և Նիկիոյի եպիսկոպոսը, որը բուլղար հոգևոր ապագեմիայի տեսուչն է:

Մենք, հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության անունից, բարի գալուստ ենք մաղթում ձեզ, մեր թանկագին հյուրեր, և խնդրում, որ ձեր վերադարձին մեր ուղջույնները հաղորդեք բուլղար հոգևոր ապագեմիայի մեր եղբայրներին»:

Այնուհետև գործադրության դրվեց ճեմարանի ուսանողության ուժերով պատրաստված գեղարվեստական մի ծրագիր՝ քաղկացած շարականներից, երգերից և արտասանություններից:

Հանդեսի ավարտին տեսչի հրավերով ճեմարանի ուսանողության և դասախոսական կազմին ուղղվող օրհնության խոսք ասաց Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքը.

«Հոգեշնորհ ռեկտոր, Բարգեղի դասախոսներ և շատ սիրելի ուսանողներ, շատ ուրախ եմ, որ Նորիմ Սրբություն Վազգեն Ա կաթողիկոսը ինձ հրավիրեց և առիթն ընծայեց մաև լիցելու ձեր մեջ՝ այս հոգևոր հաստատության կամարների ներքո, որտեղ պատրաստվում են հայ եկեղեցու և հայ ժողովրդի հոգևոր ծառայության կանգնած ազնիվ եկեղեցական մշակներ: Մենք գալիս ենք եղբայրական հուլիարիայից, մեզ հետ բերելով Աստուծո օրհնությունը՝ հաև կրթական այս հաստատությանը: Որսխ հոգևորականներ մենք աշխատում ենք, ինչքան որ կարող ենք, տարածել Աստուծո խոսքը և արժանանալ Նրա օրհնությանը:

Սիրելի դասախոսներ և ուսանողներ, այժմ ապրում ենք էկոմենիզմի շարաշրջանում, երբ բոլոր եկեղեցիները եղբայրորեն գործակցում են իրար հետ: Այսօր աստվածաբանությունը նպատակ ունի քացատրելու և ամրապնդելու եկեղեցիների միջև համերաշխության ոգին: Եթե անցյալում քաղաքական կամ կրոնական որևէ պատճառ կարող էր առիթ հանդիսանալ եկեղեցիների միջև համերաշխության ոգու խափանմանը, ապա այսօր նման երեւոյթները տեղի ունեցաւ չեն կարող: «Առանց իճճ,—իճշպես ասել է Տերը,— ոչինչ անել չեք կարող»: Այսօր էլ մեզ զգնում և առաջնորդում է սուրբ Հոգին, որպեսզի հարատեւենք մեր սրբազան առաքելության մեջ, Քրիստոսի եկեղեցու փառքի համար, և ամենքս էլ լինենք մեկ և անքաժան, իճշպես մի և անքաժան է եղել Քրիստոսի ընդհանրական եկեղեցին:

Թող Աստուծո՞ւ օրհնությու՞նը լինի ձեզ հետ: Ամեն:

Հոգևոր ճեմարանի հարկի տակ սույն հանդիպումն ավարտվեց Տերու-
հական աղոթքով և Տ. Մաքսիմ Պատրիարքի օրհնությամբ:



ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ ԵՒ ԵԵՐՈՒՄԱԿԱՐԵՐՈՒՄ՝ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՀԻԾԱՏԱԿԻՆ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՇԿԵՐՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ԲՈՒՂԱՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Նույն օրը, ժամը 15-ից, Հայկական ՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը, ի պատիվ Մայր Աթոռի բարձրաստիճան հյուրերի, պաշտոնական ճաշկերույթ տվեց «Աճի» հյուրանոցի ջքեղ դահլիճում:

Ընդունելությանը ներկա էին Հայոց Հայրապետը, բուլղարական եկեղեցու Սրբազան Պատրիարքը, բուլղար և հայ բարձրաստիճան հոգևորականներ, ինչպես նաև պաշտոնական այլ հրավիրյալներ հայ մտավորականության ներկայացուցիչներից՝ շուրջ 30 հոգի:

Հարգարժան հյուրերին ջերմորեն ընդունեց և բարի գալուստ մաղթեց տիար Սարգիս Գասպարյանը, որը և ղեկավարեց կառավարական սույն ճաշկերույթը:

Պատոճ Գասպարյանը բաժակ առաջարկեց բուլղարական օրթոդոքս եկեղեցու Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքի կենացը:

Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքը, ի պատասխան պարոն Սարգիս Գասպարյանի, իր և իր շքախմբի անունից ողջունելով Սովետական Հաստանի կառավարության ներկայացուցիչ, ասաց.

«Հարգելի պրն. Գասպարյան, Ձերդ Սրբություն, գերաշնորհ հայրեր, հայ եկեղեցու և հայ ժողովրդի ներկայացուցիչներ, սիրելի սեղանակիցներ,

Հասարակաց սեղանն ամեն ժամանակ ու բոլոր ժողովուրդների մոտ մարդկանց իրար միացնելու ու սիրո կապերն ամրապնդելու ուժ ունի: Կարծում եմ, որ այսպիսի նշանակություն ունի և այս սեղանը, որը թեև պաշտոնական է, սակայն արտահայտությունն է մեր երկու ժողովուրդների ու նրանց եկեղեցիների միջև հարգանքի և բարեկամական զգացումների: Եվ որովհետև Հայկական Սոցիալիստական Հանրապետությունը մաս է կազմում Սովետական մեծ Միության, կարելի է ասել, որ սույն սեղանն արտահայտությունն է նույնպես Սովետական Միության ու մեր ժողովրդական Հանրապետության միջև գոյություն ունեցող ամուր կապերի ու սրտագին հարաբերությունների:

Իմ և իմն ուղեկցողների անունից ջերմագին շնորհակալություն եմ հայտնում գերազնիվ հյուրընկալին՝ հարգելի պրն. Գասպարյանին, իսկ հանձին նրա՝ Հայկական ՍՍՀ կառավարությանը՝ մեզ ցույց տրված սիրալիկ հյուրասիրության համար:

Մենք հնագույն մշակույթ և խիզախ ժողովուրդ ունեցող ձեր սքանչելի երկիրն այցելեցինք Մեր գերհարգելի Եղբայր Ամենայն Հայոց գերագույն կաթողիկոս և Պատրիարք Նորին Սրբություն Վազգեն Ա-ի սիրալիկ հրավերով: Մեր այցելության նպատակն է՝ անմիջականորեն ծանոթանալ հայ եկեղեցուն, նրա պատմությանը, աստվածաբանությանը, կառուցվածքին, վիճակին, ավանդություններին և գործունեությանը, ձեր երկրին ու նրա մեծ շինարարությանը և միաժամանակ ձեր եկեղեցու արժանավոր Գաճակալի հետ կարծիքներ փոխանակել մեր փոխհարաբերությունների և եկեղեցիների միջոցով աշխարհի խաղաղության պահպանման ու ամրապնդման գործին մեր քերելիք մասնակցության մասին, որովհետև մեր օրերի գերագույն հրամայականն է՝ խաղաղության պահպանումը:

Մենք ամեն հիմք ունենք գոհ մնալու մեր սույն այցելությունից: Մեր այցելության օրերին մենք հնարավորություն ունեցանք լինելու մի շարք տեսարժան վայրերում՝ կապված հայ ժողովրդի պատմության հետ, տեսնելու

մշակութային մեծարժեք հուշարձաններ, խանգարաններ ու գրադարաններ։
Կարելի է անվարան ասել, որ ամբողջ Հայաստանը ներկայացնում է յուրա-
հատուկ մի խանգարան։ Ձեր մեծանուն պատմաբան Մովսես Խորենացին
ժամանակին ասել է, որ Հայաստանը մի «փոքր աճու» է։ Սակայն իր պատ-
մության ընթացքում հայ ժողովուրդը զարմանալի քաջություն է ցուցաբերել ու
մեծ հերոսներ ծնել։ Հիշենք միայն լեգենդար Վարդան Մամիկոնյանի սրխ-
ազործությունը՝ հերիսոտող պարսիկների դեմ հայերի մղած պայքարում։

Մենք այս մի քանի օրերի ընթացքում ծանոթացանք նաև ձեր երկրի նոր, սոցիալիստական շինարարությանը ու Հայկական ՍՍՀ Հանրապետությունում վերջին տարիներից ձեռք բերված սոցետական ու տեխնիկական առաջադի-
վությունը:

[illegible]

Թույլ տվեք խիստ կարճ մի ուղևորություն անել մեր մոտավոր անցյալի մեջ ու հայերի կողմից թուղարանների հանդեպ ցուցաբերված անճմազոհության շղթագներից միայն մեկը հիշել:

1877 թվականի դեկտեմբերի 29-ը ճակատագրական մի օր էր Թաթար Փազարճիք (ներկայիս Փազարճիք) քաղաքի համար: Ռուս ազատարար զորքերը հաղթականորեն դիմում են դեպի Սոֆիա՝ համբավվոր գեներալ Գուրկոյի հրամանատարությամբ տակ: Մոտեցնում են Փազարճիքին: Օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար Սուլեյման փաշան չի ուզում քաղաքը հեշտությամբ զիջել: Գրոշում է այն այրել, իսկ քնակչությանը՝ ոչնչացնել: Հեռագրով Պուլսից իր որոշման մասին հավանություն է ուզում: Թաթար Փազարճիքի կայարանապետը մի խիզախ հայորդի է լինում՝ Հովհաննես Սվաճյան անունով: Ստացվում է հեռագրով տոկալի պատասխանը. «Քաղաքն այրել, իսկ քնակչությանը երեխաների հետ կոտորել»: Մի պաղ սարսուռ է անցնում Սվաճյանի մարմնով: Այս ճակատագրական պահին, սակայն, նրա մեջ ծագում է մարդասիրական մի միտք. այլափոխել հեռագրի քնագիրը. «Փազարճիքը պահպանել, իսկ քնակչությանը չկոտորել»: Հետևյալ օրը ռուսական զորքերը մտնում են քաղաք, և Փազարճիքի վրա շողում է ազատության արևը: Պատմական սույն հեռագրի ժապավենը, իրական և չաղաղեղ ընդգրով, մինչև այսօր էլ մնում է քաղաքային խորհրդի արխիվում՝ հայազգի Սվաճյանի խիզախության, զոհաբերության որպես փաստ:

Բազմաթիվ հայեր մշակույթի իսկական գործիչներ են եղել Բուլղարիա-
յում՝ որպես տպագրիչ, ոսկերիչ, ջուլհակ (գորգագործ և մետաքսի վար-
պետ), ծուլիչ, նկարիչ, երաժիշտ, ուսուցիչ, պաշտոնյա և այլն:

Ներկայումս Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության մեջ ապրում են շուրջ 25 հազար հայեր: Նրանք թարի, պատվավոր հայրենասերներ են, աշխատասեր և օրինակելի քաղաքացիներ: Լրիվ ազատություն են վայելում և իրավահավասար ապրում են մեր ժողովրդի ուրախություններով:

Թույլ տվե՞ք մի անգամ ևս արտահայտել իմ ուրախությունն ու շնորհակալությունը այս սրտագին ընդունելության համար և քաժակ պարպել պրն. Գառպարյանի առողջության, Հայկական ՍՍ Հանրապետության և ՍՍՀ Միության ղեկավարների, հայ և Սովետական Միության մյուս ժողովուրդների երջանկության և հաջողության, խաղաղասեր ժողովուրդների քարեկալության ու աշխարհում խաղաղության հաղթանակի կենսագր»։

Ընդունելության ընթացքում պրմ. Գասպարյանը երկրորդ քաժակն առաջարկեց խմել Հայոց Հայրապետի կենացը՝ բարձրորեն գնահատելով Նրա եկեղեցաշեն, հայրենամիլեր, խաղաղասիրական գործունեությունը, ինչպես նաև Նրա եռանդուն ջանքերը միջեկեղեցական հարաբերությունների ասուլարեզում:

Հայոց Հայրապետը, խոսք առնելով, ասաց.

«Մենք ևս կուզենայինք միանալ պարոն Գասպարյանի առաջարկած քաժակին՝ կրկին ողջունելու համար մեր թանկագին հյուրերին: Այս առթիվ նախ Մենք կցանկանայինք ի սրտե Մեր երախտագիտությունը հայտնել պրմ. Գասպարյանին այս ընդունելության համար, որով մեծարվում է Մայր Աթոռի թանկագին հյուրը: Մեր սրտագին շնորհակալությունն ենք հայտնում նաև այն բոլոր դյուրությունների համար, որ այս առիթով ընծայվեցին մեզ՝ պատշաճ հարգանքով և մեծարանքով ընդունելու համար մեր քույր եկեղեցու բարձրաստիճան պատվիրակությանը: Եվ իսկապես արդար ու արժան էր, որ այս բոլորը տեղի ունենար, որովհետև մեր հյուրերը սովորական հյուրեր չեն, այլ մերկայացուցիչները մի եկեղեցու և ժողովրդի, որին Մենք համարում ենք մեր մերձավորագույն և վաղեմի բարեկամը:

Այս մի քանի օրերի ընթացքում զանազան առիթներով Մենք պատենությունը ունեցանք հիշատակելու այդ բարեկամության մասին անցյալից: Իհնչև մեր օրերը: Այժմ Մենք ցանկանում ենք մշել մի այլ հանգամանք ևս, որն արտահայտությունն է բուլղարական պետության սքանչելի վերաբերմունքի դեպի Բուլղարիայում ապրող հայերը: Այսօր Բուլղարիայում խաղաղ պայմաններում ապրում են ավելի քան 20 հազար հայեր իրենց եկեղեցական, մշակութային և ազգային կազմակերպված կյանքով և վայելում են ամեն ազատություն, ինչպես իրենք՝ բուլղարացիները: Մենք խորապես երախտապարտ ենք բուլղարական կառավարությանը այս ազնիվ վերաբերմունքի համար դեպի երկրի հայ քաղաքացիները:

Մենք համոզված ենք, որ բուլղար ժողովուրդը սիրում և գնահատում է մեզ իբրև եկեղեցի և իբրև մշակույթ ունեցող ժողովուրդ:

Այս մի քանի հաստատումներից հետո Մենք կկամենայինք կրկին անգամ բաժակ բարձրացնել Նորին Արքայուն Մաքսիմ Պատրիարքի կենացը, որ մեզ համար խորհրդանշում է և՛ բուլղարական օրթոդոքս եկեղեցին, և՛ համայն բուլղար ժողովուրդը:

Կեցցե՛ Բուլղարիան»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆԻ ՄՈՏ

Մայիսի 14-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ տիար Գրիգոր Արզումանյանն ընդունեց Հայոց Հայրապետին, Բուլղարիայի Սրբազան Պատրիարքին և Նրանց ուղեկցող հայ և բուլղար բարձրաստիճան հոգևորականներին:

Երկու Հայրապետների և Մինիստրների սովետի պարոն նախագահի միջև ջերմ մթնոլորտում տեղի ունեցավ ափալիք գրույց, որի ընթացքում Հայոց Հայրապետն իր թանկագին հյուրերին ներկայացրեց մեծահարգ պարոն նախագահին:

Այնուհետև տիար Գրիգոր Արզումանյանը, հանուն հայրենի կառավարության, ջերմորեն ողջունեց և բարի գալուստ մաղթեց երկու Հայրապետներ-

րին և Նրա՛նց շքանքի անդամներին: Ապա մեծահարգ պատրոն նախագահը գրույցի ընթացքում իր սլատվավոր հյուրերին պատմեց տնտեսական և մշակութային շինարարության ասպարեզում Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումների և ապագա ղեկավարների մասին:

Սույն գրույցին ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Միջհատրների սովետի գործերի կառավարիչ Լ. Ե. Վարդանյանը և Հայկական ՍՍՀ Միջհատրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գառապարյանը:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐԺԸ ՀՐԱԺԵՑՑ Է
ԱՌՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՑ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ**

Մայիսի 14-ին, երեկոյան ժամը 19-ին, Վեհաքառում երկու Հայրապետների միջև տեղի ունեցավ եղբայրական տեսակցություն, ուր մի անգամ ևս զոհունակությամբ հաստատվեց, որ թուղարական և հայ եկեղեցիների միջև գոյություն ունեն բարեկամական սերտ կապեր էկումենիկ գործակցության ոգով, ինչպես նաև հայ և թուղար ժողովուրդների միջև՝ եղբայրական անկեղծ ու դարավոր բարեկամություն, որը շարունակվում է մեր օրերում, և որի զարգացման և ամրապնդման համար աշխատում և աղոթում են երկու քույր եկեղեցիները:

Այնուհետև հանդիսավոր իրադրության մեջ երկու Հայրապետները, շքեղապատված իրենց շքանքի անդամներով, ստորագրեցին համատեղ պաշտոնական հաղորդագրությունը՝ որպես պատմական փաստաթուղթ (ՏԵ՛ս «Էջմիածին» ամսագիր, № Ե, էջ 15):

Հուզիչ էր հրաժեշտի պահը: Համատեղ հաղորդագրության ստորագրումից հետո երկու Հայրապետները եկեղեցական թափոքով առաջնորդվեցին Մայր տաճար, ուր միատեղ աղոթեցին և ապա ջերմորեն ողջագուրվեցին քրիստոնեական եղբայրության սիրո համքույրով:

Ավելի ուշ, ժամը 21-ին, Վեհաքառի սեղանատանը հյուրերի պատվին տրվեց հրաժեշտի ճաշկերույթ: Հայոց Հայրապետը ջերմ մթնոլորտում, եղբայրական սիրալիոր զգացումներով տոգորված, թարի ճանապարհ մաղթեց Մայր Աթոռի պատվարժան հյուրերին:

Տ. Մաքսիմ Պատրիարքը, հրաժեշտի պահին խոսք առնելով, ասաց.

«Ձերդ Սրբություն,

Արդեն շուրջ մեկ շաբաթ է, ինչ Ձեր հյուրն ենք: Անցնող այս օրերը հուզումների և ոգևորությունների անմոռանալի օրեր եղան մեզ համար, արդյունք այն քոլորի, ինչ առիթ ունեցանք տեսնելու, լսելու և ապրելու ձեր սքանչելի երկրում: Յուրաքանչյուր օր և յուրաքանչյուր ժամ նորանոր սքանչելի տպավորություններ և միշտ ավելի ոգևորիչ ուրախություններ էր պատհառում մեզ: Սակայն մեր այս ժամանակավոր կյանքում ամեն ինչ վերջ ունի, նույնիսկ ուրախառիթ օրերն ու ժամերը: Այսպես, մեր հաճելի այցելությունն էլ մոտենում է իր վախճանին: Քիչ հետո մենք հրաժեշտ ենք առնելու Ձերդ Սրբությունից և վերադառնալու ենք մեր հայրենիքը: Բաժանման այս պահին ուզում եմ վստահեցնել Ձերդ Սրբությանը, որ օրհնյալ Հայաստանում մեր այցելությունը մեր երկու եկեղեցիների փոխհարաբերությունների պատմության մեջ պիտի ճշվի որպես իսկապես հիշատակելի դեպք, իսկ մեր մեջ պիտի թողնի անջնջելի տպավորություններ և հուշեր, որոնք մեր ամբողջ կյանքում ուրախության և գոհունակության աղբյուր պիտի հանդիսանան մեզ համար:

Խնդրում եմ, Ձերդ Արքությունը, ընդունել անձնապես իմ և մեր եկեղեցու պատվիրակության անդամների անկեղծ երախտագիտությունը մեր հանդեպ ջույգ տրված եղբայրական ընդունելության համար: Թող բազումոգործ Աստված Ձերդ Արքությանը պահպանի կատարյալ առողջության մեջ, որպեսզի տակավին երկար տարիներ այսպես բազմադյուն կերպով ծառայեք ձեր Մայր եկեղեցում ու իրագործեք Ձեր բոլոր բարի մտադրությունները: Ամեն»:

ՄԵԿՆՈՒՄ

Մայիսի 15-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 7.30-ին, Նորին Արքություն **Տ. Մաքսիմ Պատրիարքը** իր շքախմբով մեկնեց Մայր Աթոռից:

Թանկագին հյուրերին Երևանի օդանավակայանում ճանապարհեց Հայոց Հայրապետը՝ շրջապատված թեմակալ առաջնորդներով և Մայր Աթոռի միաբանության անդամներով:

Բուլղարական օրթոդոքս եկեղեցու պատվիրակությանը Երևանի օդանավակայանում բարի ճանապարհ մաղթեցին նաև Հայկական ՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը** և տեղակալ **Ս. Հովհաննիսյանը**:

Նորին Արքություն **Տ. Մաքսիմ Պատրիարքը** Մայր Աթոռում իր այցելության օրերին, հանուն բուլղարական օրթոդոքս եկեղեցու, հանուն իր և սըրբազան Սինոդի, պաշտոնական եղբայրական հրավեր ուղղեց Հայոց Հայրապետին՝ փոխադարձ այցելություն կատարելու Բուլղարիա, այս տարվա աշնանը՝ որպես բուլղարական օրթոդոքս եկեղեցու հյուրը:

Արքազան Պատրիարք Հոր ջերմ հրավերը գոհունակությամբ և սիրով ընդունեց Հայոց Հայրապետը:





ՎԱՋԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՄԺՅԱՆ

(Առաջնորդ, ռուսիմահալ թեմի)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ԿՈՐՈՒՍԸ*

Ծանր է մեր սուգը, խոր է մեր վիշտը, անփոխարինելի է մեր կորուստը: Մեր սիրեցյալ Հայրապետը՝ Ամենայն Հայոց մեծագործ և հայրենաճվեր կաթողիկոս Գևորգ Զ-ը, ոչ ևս է մեր մեջ:

Դժվար է, շատ դժվար հաշտվել այն մտքին հետ, թե այլևս չունինք զինքն իբրև Գերագույն Պետ և Առաջնորդ, մանավանդ մեր եկեղեցվո համար տազնապանքով ու մեզ տանջող հարցերով լեցուն այս օրերուն, խոռվահույզ աշխարհի մը մեջ:

Ինչպե՞ս պիտի հալի կապարը մեր սրտերուն:

Բայց մենք սուրբ հավատք մը ունինք: Ինչպես բնության ծոցին մեջ, նույնպես և քարոյական-հոգեկան աշխարհի մեջ ոչինչ չի կորսվիր: Մենք քարոյական իրականություններու, հոգեկան արժեքներու աշխարհ մը կդավանինք, կապրինք այդ աշխարհի մեջ, կապրինք այդ աշխարհով: Այդ աշխարհը մեր սուրբ հավատքին կրակով, մեր լուսաբանակ մախնյաց հանճարով կուտակված արժեքներու գանձարանն է, զոր ոչ ոք կրնա հափշտակել մեզմե:


Մեր մեծ Հայրապետը, որ Իր աչքերը հավետ փակելով անցավ դեպի մյուս ափը կյանքին, մեզմե կթաժմվի մարմնապես, որպեսզի «գալ առ մեզ» և քաշխվի մեզ քոլորիս հոգեպես ու շարունակե զմեզ առաջնորդել նաև այսուհետև, մեր երանելի Լուսավորիչներու և Շնորհալիներու շունչով, անոնց ստեղծած հազարամյա հոգեկան արժեքներու լույսով:

Մեր փրկչին և Տիրոջը ս. Հարության շնորհներովը զեղուն սա օրերուն, որպես քաղցր և հույժ մխիթարական ու կենարար խոսք, կլսենք պատգամը մահվամբ մահը հաղթող Աստվածորդվույն՝ «Ո՛չ թողից զձեզ որքս, գամ առ ձեզ», պատգամ մը, որ մեզ կթողու նաև ի Տեր հանգուցյալ մեր մեծ քահանայապետը:

Ուխտե՛նք հավատարիմ մնալ Իր հիշատակին, ուխտե՛նք հավատարիմ մնալ Իր սուրբ գործին, ուխտե՛նք հավատարիմ մնալ սրբություն սրբոց Մայր Էջմիածնին, ուխտե՛նք հավատարիմ մնալ մեր ժողովուրդին և մեր վերջն-ձյուղած մայր հայրենիքին:

Խաղաղություն և լույս՝ երջանկահիշատակ Գևորգ Զ Հայրապետի արդար հոգվույն:

* Երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի մահվան քառանորդ տարեդիցի առթիվ վերահրատարակում ենք սույն դամբանական խոսքը, որն արտասանել է Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը՝ որպես առաջնորդ ռուսիմահալ թեմի, 1954 թ. մայիսի 27-ին:



**ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ, ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՋ
ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ**

Մայիսի 19-ին, կիրակի օրը, երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի մահվան 20-րդ տարելիցի առիթով վրաժայոց թեմի առաջնորդ, տ. Գևորգ եպս. Սերայդարյանը Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում:

Սրբազան արարողությանը ներկա են լինում Մայր Աթոռի ողջ միաբանությունը, ներքին թեմերի առաջնորդները, այդ թվում՝ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, տ. Պարզե եպս. Գևորգյանը, տ. Վահան եպս. Տերյանը, ինչպես նաև Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիրոսյանն ու Բուլղարիայի թեմական խորհրդի ատենապետ Օճնիկ Ասլանյանը, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Ս. պատարագին ներկա են լինում նաև Գերագույն՝ Ռոգևոր խորհրդի աշխարհական անդամները, այդ թվում՝ պրոֆ. Առաքել Առաքելյանը, պրոֆ. Սարգիս Մելիքեթյանը, գրականագետ Հովհաննես Թոփուզյանը, ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը, Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների թաժմի ընդհանուր քարտուղար Պ. Շահբազյանը, Արարատյան հայրապետական թեմի և վրաժայոց թեմական խորհուրդների անդամները:

Հանդիսությանը ներկա են նաև լուսամոզի և մեծագործ Հայրապետի հետ գործակցած մտավորականներ, այդ թվում՝ պրոֆ. Արարատ Ղարիբյանը, պրոֆ. Աշոտ Աթրահամյանը և ուրիշներ:

Երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ հայրենաձեռն կաթողիկոսի հիշատակին նվիրված հանդիսությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Միհիստորիկների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ա. Գասպարյանը և տեղակալ Ա. Հովհաննիսյանը:

Մայր տաճարը լիքն է հավատացյալների հոծ քաղմությամբ:

Ժամը 12-ին Վեճափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր տաճար:

Ս. պատարագի երգեցողությունը վեճ հանդիսավորությամբ կատարում է Մայր տաճարի երգչախումբը՝ մինչև վերջին Ավետարանի ընթերցումը:

Քարոզի պահն է: Ավագ սեղանի բեմ է առաջնորդվում Վեճափառ Հայրապետը՝ ոգեկոչելու հիշատակը երանաշնորհ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի և վեր հանելու մեծագործ Հայրապետի կյանքի ու գործունեության հատկանշական և գլխավոր հանգրվանները:

**ՎԵՋՈՒՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ՝
Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ**

«Հովիտ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:

Միրելի հավատացյալ ժողովուրդ,

Փրկիչը մեր Հիսուս իր Ավետարանում այսպես է բնորոշում կերպարը քաջ հովիտ: Քաջ է այն հովիվը, որ իր անձով պաշտպանում և պահպանում է իր ոչխարներին: Դրանով է հայտնի դառնում, թե ինչքան քարելիդն, ինչքան ցվիրված և ինչքան քաջ է ոչխարների վրա պաշտոն ունեցող մի հովիվ: Եվ, բնականաբար, ինչպես գրեթե Հիսուսի քոյրը մամն արտահայտություններում, խոսքը վերաբերում է այն մարդկանց, որոնք վերակացու են կարգված իրենց նմանների վրա՝ իբրև հոգևոր հովիվներ հատկապես:

Այս խոսքերով ենք սկսում Մենք այսօրվա քարոզը, որ ցվիրված է հանգուցյալ երջանկահիշատակ Գևորգ Զ Ամենայն Հայոց Հայրապետի հիշատակին, որի մահվանից լրացան այս օրերը քսան տարիներ: Իրոք, Գևորգ Զ Չորեքյան Հայրապետի կյանքը և գործը մինչև խոր ծերություն, ամբողջովին համապատասխանում է այն քաջ հովիվի կերպարին, որ իր անձը դնում է իր ոչխարների վրա, այսինքն մի հովվապետի, որ իր ողջ կյանքը ցվիրել է իր եկեղեցուն և իր ժողովուրդին՝ ի պաշտպանություն և ի պահպանություն իր քոյր հոգևոր զավակներին:

Ձեզանից շատ-շատերը հավանաբար հիշում են նրան անձնապես, ինչպես նաև Մենք՝ իբրև մախկին առաջնորդ ու միմահայ թեմի: Ընդհանրապես նրան, երբ այցելեցինք առաջին անգամ մայր հայրենիք և սուրբ Էջմիածին՝ նրա ընտրության առթիվ, 1945 թվականի Մեծ հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո, ապա մի քանի անգամներ ևս երբ նրա հրավերով մեր թեմական գործերով եկանք Մայր Աթոռ: Մենք քոյրու, որ նրան տեսել ենք ու ճանաչել, մեծ հիշատակներ ենք պահում իր անձնավորությունից, իր խոհերից, իր մտածումներից, իր խոսքերից և իր կենդանի գործից: Այսօր թեև քսան տարիներ են անցել, սակայն մենք նրա հիշատակը չենք մոռացել ու չենք մոռանալու: Ուղիղ քսան տարի առաջ, մայիսի 6-ին կամ 7-ին, երբ ինքը մահվան անկողնում էր գտնվում Երևանի հիվանդանոցում, յուր երիտասարդ միաբաններից մի քանի սարկավազներ վերջին այցելությունն են տալիս իրենց սիրեցյալ և մահամերձ Հայրապետին: Հայրապետը, ինչպես ցկարագրում են այդ այցելող միաբանները, հազիվ կարողանում է խոսել, քայլ, իր վերջին ուժերը հավաքելով, մի քանի հորդորներ է տալիս, ու իր վերջին խոսքը լինում է՝ «Երբեմն հիշեցեք ինձ»:

Ահավասիկ քսան տարի անց Մենք այդ ցվիրական պարտականությունն ենք ուզում կատարել այստեղ, ձեզ հետ միասին, հիշել նրան, աղոթել նրա հոգու խաղաղության և լուսավորության համար: Հիշել Գևորգ Զ Հայրապետին, դա նշանակում է հիշել նրա ողջ կյանքը և գործունեությունը, որ տարածվում է ավելի քան երեք քառորդ դարու վրա: Հիշել Գևորգ Զ կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը, նշանակում է ավելին, նշանակում է հիշել մեր եկեղեցու և մեր ժողովրդի պատմությունն այդ ժամանակաշրջանի, որովհետև Գևորգ Զ Հայրապետն իր պատանի հասակից արդեն իր կյանքը կապել էր յուր ժողովրդի կյանքի հետ: Գևորգ Զ կաթողիկոսի ամբողջ կյանքն ու գործունեությունը միաձուլված է հայ ժողովրդի ճակատագրի ու պատմության հետ, նրա դժբախտությունների հետ, նրա ողբերգական պահերի հետ, ինչպես նաև հայոց հայրենիքի՝ մեր Սովետական Հայաստանի վերածննդի պատմության հետ:



ԽՐԶԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԻՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԻՐ
ԱՇԽԱՏԱՍԵՂԱՆԻ ԱՌԱՋ

Նա ծնվել է 1868 թվականին Ռոստովի մոտ Նոր Նախիջևան քաղաքում և, տեղի ճախակրթարանն ավարտելուց հետո 80-ական թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան ի սուրբ Էջմիածին, փայլուն կերպով ավարտելուց հետո ամբողջ ընթացքը 1889 թվականին ուղարկվում է արտասահման՝ Գերմանիա, Լայպցիգ քաղաք, իր մի քանի ճեմարանական ընկերների հետ, որպեսզի իր ուսումը առավել կատարելագործի, օտար լեզուներ սովորի և վերադառնա ավելի զինված, ավելի գորացած մտքով ու հոգով:

Եվ այդպես էլ լինում է: Նա ավարտում է Լայպցիգի աստվածաբանության և փիլիսոփայության ֆակուլտետը և միաժամանակ՝ կոնսերվատորիան, որովհետև Գևորգ սարկավազը բացառիկ ընդունակություններ էր ցուցաբերում երաժշտության ասպարեզում:

Վերադառնում է և կոչվում հոգևոր աշխատանքի հենց Ռոստով քաղաքում, իր ծննդավայրում: Դառնում է այնտեղի հայկական հոգևոր վարժարանի դասախոսներից մեկը, և՛ խմբավար, և՛ երաժշտության ուսուցիչ: Մնում է այնտեղ մինչև 1913 թվականը, երբ հրավիրվում է Մայր Աթոռ, երջանկահիշատակ Գևորգ Ե կաթողիկոսի կողմից ու ձեռնադրվում է վարդապետ:

Այդ ամբողջ շրջանը, սիրելի ժողովուրդ, եկեղեցական տեսակետով մահավանդ, մի բախտորոշ շրջան է հանդիսանում հայ եկեղեցու պատմության մեջ: Առաջին անգամն է, որ Գևորգյան ճեմարանը կարողանում է մեր եկեղեցուն ընծայել պատրաստված, գիտակից և հավատավոր կուսակրոն հոգեվորականներ: Եվ պետք է ասել, որ առանձին չէր այդ տեսակետից Գևորգ Չորեքյան սարկավազը: Նա պատկանում էր մի սքանչելի սերնդի, Աստծուց սրբնված մի սերնդի: Բավական է հիշել Կոմիտաս Վարդապետի անունը, որ Գևորգ Չորեքյանի ընկերներից և միաբանակից եղբայրներից մեկն էր, և Գարեգին Հովսեփյանցը՝ մեծ գիտնականը, ապագա Կիլիկիո կաթողիկոսը, Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը և ուրիշներ: Ահա այսպիսի սերունդ առաջին անգամն է, որ երկար ժամանակներից հետո ի հայտ էր գալիս, և մեր եկեղեցին օժտված էր բուն իրենց կոչումին նվիրված բարձրաստիճան, զարգացած, լուսամիտ, հայրենասեր հոգևորականներով: Այդ շրջանը մեր եկեղեցու, հատկապես Մայր Աթոռի պատմության մեջ մի փայլուն էջ է հանդիսանում: Սկսված այդ գործը հետզհետե առավել ծավալով պետք է շարունակվեր, և Մենք պատկերացում ենք, թե ինչպիսի փառավոր արդյունքների պիտի հասներ մեր եկեղեցին ամեն կերպիվ, եթե այդ ընթացքը բնականոն կերպով իրապես դեպի առաջ ընթանար: Սակայն, ինչպես գիտեք, 1914-ին պայթեց առաջին համաշխարհային պատերազմը, և ամեն ինչ, ամեն հույս կանգ առավ, ամեն եկեղեցաշեն և ազգանվեր գործ նույնպես, մանավանդ Արևմտահայաստանում, որտեղ, 1915—1916 թվականներին ողջ հայությունը գոհիլեց Օսմանյան Կայսրության դաժան որոշումով և գործադրությամբ, այն, ինչ որ հայտնի է ամբողջ աշխարհին իբրև մեր դարի առաջին ցեղասպանությունը: Ահավոր տարիներ էին հայ ժողովրդի համար, երբ Մայր Աթոռ ս. Էջմիածինն էլ լծված էր ծանր աշխատանքի, մահավանդ այդ օրերին, երբ հրաշքով ազատված երկու-երեք հարյուր հազար հայ գաղթականներ, շնորհիվ ուսս բանակների առաջխաղացման, կարողացել էին փրկել իրենց կյանքը: Այդ գաղթականությունն ալիք առ ալիք հոսեց դեպի Արաքս, դեպի Արարատյան դաշտ, դեպի Արևելահայաստան, ուր ապահով կյանքի պայմաններ կային: Բոլոր ժամանակակիցները խոր հուզումով նկարագրում են այդ օրերը, երբ Էջմիածնից մինչև Երևան բոլոր ճանապարհների վրա հազարավոր, տասնյակ հազարավոր որբեր, այրիներ, հիվանդներ, ծերեր, անօգնական ու սոված մահանում էին:

Ահա աղայիսի գարնունեղի պայմանների մեջ Մայր Աթոռի հոգևորականները քաջ ու նվիրված հովիվների նման աստված իջան՝ ի պաշտպանություն և ի պահպանություն իրենց ժողովրդի:

Եվ Գևորգ Չորեքչյան եպիսկոպոսը, առաջիններից մեկը եղավ՝ իր ընկերների հետ միասին նվիրվելու հայ գաղթականների, հայ որբերի փրկության գործին: Նա նախագահում էր Երևանում կազմակերպված գաղթականների օգնության կոմիտեին: Գևորգ եպիսկոպոսը պատվով կատարեց այդ գործը: Հազար-հազար գաղթականներ, որքեր լիակվեցին ստույգ մահից:

Մի ամբողջ ողբերգական պատմական շրջան վերջ գտավ:

Ահա այս եղավ Գևորգ Չորեքչյան եպիսկոպոսի կյանքի և գործունեության երկրորդ շրջանը:

Նրա կյանքի և գործունեության երրորդ շրջանը սկսեց սովետական կարգերի հաստատումից հետո, երբ հայ ժողովուրդը շատ ծանր պայմանների մեջ տակավին կամաց-կամաց սկսավ իր վերքերը դարմանել, ապրել, շնչել ազատ, գործել խաղաղ և արդար պայմանների մեջ, սովետական իշխանության ներքո: Այդ շրջանին շինարարական-կազմակերպչական աշխատանք ծավալեց նաև Մայր Աթոռ ս. Էջմիածինը, այդ ժամանակվա պայմանների մեջ: Բայց մի ծանր պահ եւս ապրեց Մայր Աթոռը և հայ եկեղեցին՝ իբրև հետևանք եկեղեցու ծոցից ծնունդ առած մի շարժումի, որ կոչվում է «ազատ եկեղեցու» շարժում, որ սկիզբ առավ Հյուսիսային Կովկասում՝ Լեննորոն ունենալով Թիֆլիս քաղաքը: Այդ շարժումը Մենք այսօր հիշում ենք տխրությամբ: Թեև սկզբնական օրերին նա իր ծրագրում ուներ քարեկորոզչական, ուղիղ առաջադրանքներ, որոնց համաձայն էր հավանաբար նաև Գևորգ Չորեքչյան եպիսկոպոսը, սակայն այդ շարժումը շուտով իր բնական հունից դուրս եկավ և ստացավ վատառողջ ընթացք: Այդ ժամանակ՝ բոլոր ողջամիտ հայ հոգևորականները մի մարդու նման ոտքի կանգնեցին՝ պաշտպանելու համար Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական կարգն ու կանոնը, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գերագույն հեղինակությունը, և հայ ժողովրդի միասնության սկզբունքը սուրբ եկեղեցիով: Եվ օրվա Հայրապետն ամենահարմար մարդն է տեսնում Գևորգ Չորեքչյան եպիսկոպոսին՝ ուղարկելու Թիֆլիս, որպեսզի այդ շարժման առաջքն առնի, և վերահաստատվեն եկեղեցու ծոցի մեջ բնականոն պայմաններ: Եվ այդ գործը Յուլյան պատվով կատարում է Գևորգ Չորեքչյան եպիսկոպոսը՝ մի քանի տարվա իր նվիրված, ժրջան և հավատարիմ աշխատանքով Թիֆլիսում, Հյուսիսային Կովկասում:

Այդ ծանր, շատ պատասխանատու աշխատանքի ժամանակ նա մույնպես ի հայտ է գալիս իբրև քաջ հովիվ և ձվիրված ծառա եկեղեցու և ժողովրդի:

Բայց շուտով խաղաղությունը խանգարվում է, ինչպես գիտեք, երկրորդ համաշխարհային պատերազմով, երբ ինքը՝ Գևորգ Չորեքչյան եպիսկոպոս, արդեն կաթողիկոսական տեղապահ էր ընտրվել հանգուցյալ Խորեն կաթողիկոս Մուրադբեկյանի մահից հետո, 1938-ին: Այդ 4—5 տարիները պատերազմի, որոնց պատմությունը ձեզի ծանոթ է շատ լավ, մի շրջան է, երբ Սովետական Միության բոլոր ժողովուրդները զեն ի ձեռին ոտքի կանգնեցին՝ պաշտպանելու համար իրենց կյանքը, իրենց հայրենի հողը, իրենց ազատությունը, իրենց պատիվը: Նրանց հետ էր, և չէր կարող տարբեր լինել, նաև ողջ հայ ժողովուրդը, Սովետական Հայաստանի բոլոր քաղաքացիները: Այդ պահերին էլ Հայաստանյայց եկեղեցին իր պարտքը կատարեց իր ժողովրդի և իր հայրենիքի հանդեպ՝ ղեկավարության ներքև մեծ հայրենա-

սեր Գևորգ Զ Հայրապետի: Անմոռանալի են նրա կոչերը, նրա քարոզները՝ ի պաշտպանություն վտանգված հայրենիքի: Մեծք վստահ ենք, որ նրա կոչերն ինչ որ մի չափով օժանդակեցին, որ հայ զինվորներն ավելի բռնկումով, ավելի զոհաբերության ոգով, ավելի հերոսաբար մետվեն կռվի մեջ և փառքով պսակվեն: Եվ այդպես էլ եղավ: Հայրենասեր քաջ Հովվապետը հաջողությամբ պսակեց խիստ պատվաբեր մի ձեռնարկ ևս իր անձնական ճիգերով, իր կոչերով արտասահմանի հայության, որով մեծ գումարներ հավաքվեցին և Մայր Աթոռ ս. Էջմիածինը, հաճուն հայ ժողովրդի, կարողացավ սովետական բանակներին նվիրել տանկային մի մեծ շարասյուն: Եվ ծերունի Հայրապետը մայիսի 9-ին իր ամբողջ ժողովրդի հետ միախառնվեց և ուրախության մեծագույն պահն ապրեց, արցունքը աչքերին՝ տեսնելով հինգ տարիների դաժան պատերազմից հետո հաղթանակի արեգակի ծագումը մեր հայրենիքի նրկնականաբար վրա:

Այդ շրջանն էլ ավարտվեց: Հայոց պատմության անկվող դեպի առաջ էր գնում, այս անգամ խաղաղության պայմանների մեջ, երբ Գևորգ արքեպիսկոպոսը կաթողիկոս ընտրվեց 1945 թվականին և սկսեց իր հայրապետական գործունեությունը:

Խաղաղության տարիներին Գևորգ Զ Հայրապետն ինը տարիների շրջանում թեև խոր ծերության մեջ, բայց տիրապես ղեկավարեց Մայր Աթոռը: Իր շրջանին վերաբացվեց հոգևոր ճանապարհը, սկսեց վերահրատարակվել ԼՄայր Աթոռ ս. Էջմիածնի պաշտոնաթերթը «Էջմիածին» ամսուհով, վերականգնվեց միաբանության կյանքը, ու պետության և եկեղեցու միջև նոր հարաբերություններ ստեղծվեցին: Նրա անձնական հմայքը, նրա անձնական հայրենասիրական ապացույցներն անշուշտ որ մեծ դեր խաղացին, որպեսզի վերափոխվի այն, ինչ որ գուցե անցյալում թուրիմացություններով էր մշուշված: Պետական իշխանություններն իրոք որ մեծ բարյացակամությամբ և հարգանքով վերաբերվեցին դեպի ծերունագարդ Հայրապետը և դրանով դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածին և Հայաստանյայց եկեղեցի:

Հայաստանյայց եկեղեցին, նրա ղեկավարությամբ, մտավ իր բնական հունի մեջ և շարունակեց իր պատմական առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, մանավանդ հայրենիք-սփյուռք միասնությունն ամրապնդելու տեսակետից: Ինչ որ մեզ համար թանկ է նաև այսօր: Հանգուցյալ Հայրապետի ողջ գործունեությունը մեզ համար առաջնորդող ուղեցույց է մնում նաև մեր օրերի և ապագայի համար:

Եվ, վերջապես, հանգուցյալ Հայրապետը թեև ավելի քան 80 տարեկան արդեն, երիտասարդական ավյունով և աշխույժով դարձավ դրոշակակիրներից մին աշխարհի խաղաղության պայքարին և իր դիմումներով և իր կոչերով և իր գործունեությամբ աչքի ընկավ ոչ միայն մեր ժողովրդի կյանքի սահմաններում, այլ նաև ողջ Սովետական Միության և ամբողջ աշխարհի մեջ:

Ահա, սիրելի ժողովուրդ, մի քանի խոսքով ուրվագիծը Գևորգ Զ Հայրապետի կենսագրության: Դա ոչ միայն նրա կենսագրությունն էր, այլ նաև պատմությունը մեր ժողովրդի կյանքի, այդ 80 և ավելի տարիների: Իրոք մեծ է՜ այն մարդիկ իսկապես, որոնք իրենց տաղանդը, իրենց շնորհները, իրենց աշխատանքի ուժը նվիրում են իրենց հասարակությանը, իրենց ժողովրդին, միաձուլվում են նրա հետ և այդպիսով է, որ նրանք էլ անմահանում են, որովհետև ժողովուրդն անմահ է:

Այդպես եղավ նաև Գևորգ Զ-ի պարագան: Այսօր մենք հպարտությամբ ենք հիշում կյանքն ու վաստակը Գևորգ Զ կաթողիկոսի, մի Հայրապետ՝ իս-

նապես հավատալոր հոգով զինված, հավատարիմ մեր եկեղեցու բոլոր աշակերտներին, կարգ ու կանոնին, մի Հայրապետ՝ պայծառ իմացականությամբ, մի Հայրապետ՝ հավասարակշիռ գաղափարներով, մի Հայրապետ՝ ուժեղ, ամուր և կարապետ, մի Հայրապետ՝ տեսիլ ու հավատք ունեցող դեպի մեր ժողովրդի ապագան:

Ահա այսպես է, որ քսան տարիներ առաջ նրա մարմինը հանձնվեց հայրենի հողին: Այսպես է, որ նա մնաց և մնում է մեր հիշողության մեջ, այսպես է, որ նրա կյանքը և գործը ոսկի տառերով արձանագրված պիտի մնան մեր եկեղեցու պատմության մեջ:

Թող Աստված լուսավորի նրա հոգի, օրհնի նրա սուրբ հիշատակը և վաստակը և մեզ պաշտնադրող նրա ճանապարհով, որպեսզի կատարենք նրա կամքը, այսինքն հավատարմությամբ շարունակենք աշխատել ի շինություն և ի պայծառություն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի:

Հարգանք և օրհնություն լուսաբնակ Գևորգ Զ Հայրապետի անմոռանալի հիշատակին:

Հայրապետական քարոզից հետո Ավագ թեմի ատյանում, Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ, տեղի է ունենում հոգեհանգստյան հատուկ արարողություն՝ լուսահոգի Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի հիշատակին նվիրված:

Մայր տաճարի երգչախմբի մեներգչուհի Լուսինե Զաքարյանը մեծ աղբյուրով կատարում է «Յորժամ» հոգեհանգստյան գմայլեի տաղը, որին հաջորդում է երգչախմբի «Գթա՛, Տէր» շարականը, Ալ. Հարությունյանի հուշակա մշակումով:

Ապա Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է հանգուցյալ կաթողիկոսի շիրիմի մոտ, Մայր տաճարի զանգակատանն առնալով հարավային կողմում:

Ժիրիմը ծածկվում է թարմ ծաղիկներով: Այստեղ ևս կատարվում է հոգեհանգստյան կարգ և մի անգամ ևս ոգեկոչվում է անունն ու հիշատակը մեր սիրելի մեծագործ, հայրենասեր հոգեւոր Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի, որի անունն ու գործունեությունը սերտորեն կապված է Մայր Աթոռի վերջին հիսնամյակի տարեգրության ու հայ ժողովրդի պատմության անմոռանալի էջերին:

Ժամը 15-ին Վեհաքահի սեղանատանը տրվում է հոգեճաշ՝ հանգուցյալ Հայրապետի հիշատակին:

Հոգեճաշի ընթացքում Վեհափառ Հայրապետը, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, պրոֆ. Առաքել Առաքելյանը, պրոֆ. Արարատ Ղարիբյանը, պրոֆ. Աշոտ Արքահամյանը ոգեկոչում են հիշատակը հանգուցյալ Հայրապետի՝ վեր հանելով նրա մնայուն և պատմական արժեք ներկայացնող հոգեվոր, եկեղեցական, կրթական փառավոր գործունեությունը:

Տիար Ս. Գասպարյանն ու տիար Ս. Հովհաննիսյանը խոսք են առնում և գնահատում Հայոց Հայրապետի կատարած մանավանդ հայրենասիրական և խաղաղասիրական գործունեությունը՝ հօգուտ Մայր Աթոռի և հայրենիքի:

Հանգուցյալ մեծագործ Հայրապետի հոգին հրճվում է իր հավիտենական կյանքում, որովհետև նրա սկսած գործը ապրում է և թարգմանվում մեր օրերին Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի օրով փառավոր իրագործումներով, և նրա հիշատակը վառ ու կենդանի է Մայր Աթոռում, մայր հայրենիքում, հայ եկեղեցու կամարների տակ, իր հոգևոր զավակների և երախտագետ հայ ժողովրդի հոգիներում:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ
ԽՈՍՔԸ՝ ՌԻԴԴՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ՝ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(1974 թ. մայիս)

Մեզի համար հոգեկան իրավ մխիթարություն է, Մեր ողջույնի և օրհնության խոսքը ուղղել տիրախնամ թեմիդ պատգամավորական ժողովին և մաղթել ամբողջական հաջողություն ժողովիդ աշխատանքներուն:

Քսեզ գիտենք, թե, մանավաճ, վերջին տարիներուն, հոգևոր առաջնորդության ներքև տ. Թորգոմ արքեպիսկոպոսի, ձեր թեմական կեդրոնի կազմակերպությունը, իր բազմակողմանի գործնականությամբ, և թեմի եկեղեցական համայնքները, իրենց եկեղեցաշեն աշխատանքներով, նոր հորիզոններ բացին ամերիկահայ մեր հավատացյալ ժողովուրդի եկեղեցական-ազգային կյանքին մեջ, ներշնչելով մեզի սուեցուս ավելի հույս և ավելի լավատեսություն դեպի ձեր ապագան: Մեր հայրական գնահատանքը ի մասնավորի կուղղվի այսօր ձեր բարեջան թեմակալ առաջնորդին:

Այսօր, երբ դուք հավաքված եք՝ ձեր գնահատանքի խոսքը ըսելու անցյալ ձեր գործնականության նկատմամբ, այլև նոր ծրագիրներ մշակելու ձեր թեմի և եկեղեցիներու հետագա գործնականության կապակցությամբ, ձեզի կհղենք Մեր սնվերապահ գնահատանքի արտահայտությամբ հետ, նաև Մեր ջերմ աղոթքը, որ Տիրուջ սգնակաճությամբ ու միշտ նոր ներշնչումներով լի, շարունակեք ձեր սկսած աշխատանքներու և ձեր ծրագրած նոր առաջադրանքներու կենսագործումը, հատուկ շնություն ձեր ժողովուրդի հոգևոր կյանքի և հասարակ շենություն ձեր համայնքներու եկեղեցիներուն և անոնց կից կրոնական-կրթական և մշակութային կազմակերպություններուն:

Մասնավոր կարևորությամբ պարտք կզգանք Մեր գնահատանքը արտա-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ
ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

(1974 թ. մայիս)

Քրիստոնեական ուսմունքը թեև երկրային կյանքը կըմբռնե իբրև ճանապարհորդություն դեպի անդենական աշխարհ, անտարբեր չէ սակայն ճան երկրային կյանքի նկատմամբ: Ավելին, նույն քրիստոնեական ուսուցման համաձայն, երկրային կյանքը վարելու կերպն է, որ կսլալմանավորե երանությունը անդենական կյանքին: Երկրային կյանքի ճանապարհին է, որ մարդը իր հավատքի վկայություններով և իր քարի գործերով պիտի կարողանա արժանի դառնալ կամ ոչ, երկնային կյանքի երանության, ուրիշ խոսքով պիտի կարողանա հասնելու իր հոգիի փրկության:

Ահա թե ինչու մարդոց երկրային կյանքը վարելու կերպը, անոց առաքինի վարքը, անոց կատարած քարի գործերը, կարող են զանոք արժանի դարձնել արդարացի մեծ ու փրկության: Այսպես է, որ քրիստոնեական դաստիարակության կեդրոնական հարցը պետք է նկատել մարդու բարոյական նկարագրի կերտումը երկրային կյանքի ընթացքին: Այսպիսով, հոգևորականի ամենաբնորոշ և կարևոր գործը կհանդիսանա՝ օգնել հավատացյալին և առաջնորդել զայն դեպի հավատքի զորացում և դեպի բարոյական նկարագրի կերտում, որով ան կարող և պատրաստ կդառնա նվիրվիլ քարի գործերու կատարման:

Այս տեսակետեն, Մենք կկամենանք մասնավոր կարևորությամբ հիշեցնել ձեզ և ընդգծել, թե հոգևոր-դաստիարակչական առաքելության կենսագործման ամենաբախտորոշ ուղիմաններեն մին կհանդիսանա հոգևոր սպասավորի վարած սեփական կյանքի կենդանի օրինակը: Միայն այն հոգևորականը, որ ինք իր անհատական, ընտանեկան ու ընկերային կյանքին մեջ՝ բարոյական կեցվածք և գործնություն կդրսևորե, կկարողանա քարի օրինակ հանդիսանալ իր ժողովուրդին, և այդ քարի օրինակով մանավանդ կհաջողի առաջնորդել իր ժողովուրդը դեպի հավատքի զորացում և բարոյական նկարագրի կերտում: Օգտագործեցինք՝ օգնել, առաջնորդել զաղափարները, որովհետև բարոյական նկարագրի կերտումը վճռական չափով կախում ունի

սանձառ հավատացյալի սեփական՝ իմացական, զգացական և կամային ուժերու ճիգերեն: Բարոյական նկարագիրը սրդունք է մանավանդ ինքնակերտում գործողության: Ամեն ոք իր սեփական ճիգերով, իր սեփական կյանքի մաշ գործողության: Ամեն ոք իր սեփական կյանքի ճամփով, իր կատարած գործերով միայն կը վերածով, իր սեփական կյանքի ճամփով, իր կատարած գործերով միայն կը վերածով: Հոգևորականի, դաստիարակի գործը պետք է ըլլա հետևանքաւոր, օգնել, օժանդակել, ձերշնչել և առաջնորդել իրենց հաճեցած մոգիները դեպի բարոյական ինքնակերտում:

Եւ այդ գործը առավել հաջողութեամբ ի կատար ածելու համար, հոգևորականը հավատացյալին ցույց պետք է տա իր սեփական կյանքի օրինակը: Խոսքով քարոզչությունը միայն բավարար չէ:

Ահա այսպէս է, որ Մեր առաջ կոչի հոգևոր սպասավորի բարոյական նկարագրի կատարելության հարցը: Դուք, որ մփրված եք ձեզի վստահված ժողովուրդի քրիստոնեական դաստիարակության ազնիվ գործին, անոնց հավատքի զորացման, անոնց առաքինի նկարագրի կերտման և, հետևաբար, անոնց հոգիներու վրկության գործին, ուշադիր եղեք, հոգատար եղեք նաև ձեր հոգիներու նկատմամբ, ձեր հավատքի, ձեր առաքինի գործերու, ձեր բարոյական նկարագրի կատարելագործման նկատմամբ: Ձեր ներշնչարանները թող ըլլան՝ սուրբ Գիրքը ամբողջ, Քրիստոսի Ավետարանը մանավանդ, սուրբերու կյանքն ու գործերը հրաշալի, հերոսական պատմությունը մեր Մայր եկեղեցւոյ ու նաև բարոյաշունչ երկիրը ազգային և օտար գրականության:


Հայրաքար կհիշեցնենք ձեզի սակսկ, որ այս բոլորը նվազ ներգործող ու կենարար կդառնան, եթե անոնք մնան ձեր գիտակցության մակերեսին: Իրա միայն, իբրև լոկ իմացական գիտելիքներու պաշար, որ պետք է այլոց օգնելու, փոխանցելու: Ուսմամբ, ընթերցումներով և ուսումնասիրություններով ձեռք բերած ձեր գիտելիքները, ձեր ամբողջ մտապաշարը անհրաժեշտ է, որ շաղախվին ձեր ներաշխարհին հետ, անցնին ձեր անհատականության բովանդակում, դառնան ձեր սեփական ապրումները, դառնան ձեր երազանքներն ու տեսիլքները: Այն ատեն է միայն, որ դուք կդառնաք իսկապէս հոգոր՝ ձեր ոգեկանությամբ, ձեր բարոյական նկարագրով, ժողովուրդը առաջնորդելու ձեր հեղինակությամբ:

Ձեզմե ամեն մեկը, անձնապէս ինքն է իր նկարագիրը կերտողը, իր անձնավորությունը կերտողը: Կրօնական հավատքն ու բարի գործերը ինքնակերտման հոգեկան գործողություններ են: Եւ բարոյական մարդու կյանքը՝ ինքնակերտման, ինքնակատարելագործման տնական տքնություն է և տեղական պայքար, հաճուն հավատքի զորացման, հաճուն բարի գործոց հաջողության, հաճուն ճշմարտության, հաճուն արդարության, հաճուն մարդասիրական գաղափարներու հաղթանակին աշխարհի վրա:

Այս պայքարի ճամփուն նվաճված բարոյական նկարագիրը մարդկային կյանքի ամենապայծառ բարձունքներն են կհանդիսանա, գուցե ամենավսեմ ստեղծագործությունը մարդուն բարիի հանճարին, որով ան կձգտի մոտենալ աստվածային կատարելության:

Մեր սրտի պատգամն այս է, որ ձեզի կբերենք այսօր, Մեր օրհնություններով համղեցրած:

«Պատմեցանք ինչ գործեցէք առանց տրամեցելոյ եւ քրթմեցելոյ, զի եղիջիր ամբիծք եւ անարատք՝ որդիք Աստուծոյ, անմեղք ի մէջ կամակոր եւ խեղաթիւր ազգին, յորոց միջի երեւիցիք իբրեւ լուսաւորք յաշխարհի» (Փիլիպ. Բ 15): Ամեն:



ԵՐԶԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԱՄԻՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆՏԻՊ ՄԵԿ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ
ՔԵՆԹՐԱԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏ. ԶԵՈՖԻՐԻՆ՝
ՀԱՅ-ԱՆԳՂԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ Ի ՆՊԱՍՏ
ԿԱՏԱՐՎՈՂ ԶԱՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ՝

Անգլիքան եկեղեցու Պետ Նորից Սրբություն Ջեոֆֆրի
արքեպիսկոպոսին առաքելաշավիղ ս. Գրիգոր Լուսավորչի
գահից և ճորա ներկա Գահակալից ողջուն և աստվածային
օրհնություն.

Հոկտեմբերի 3 (1952)

Զերդ Սրբություն,

Վարդանանց հերոսամարտի 1500-ամյա տոնակատարության առթիվ,
Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցում, Սրբությանդ արտասանած ուսաճելի քարո-
զում, ինչպես նաև Զեր նախկին գրությունների մեջ արժարժեք եք բազմազան
գաղափարներ, որոնց մասին կկամենայինք Զերդ Սրբության իրազեկ անել

* Այս տարի, մայիսին, լրանում է երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի մահ-
ւում 20-ամյակը: Նորից Սրբությունը թողել է ավելի քան 60 սլատմական մեծարժեք նշա-
նակություն ունեցող կոնդակներ, ճառեր ու կարևոր ճառակներ, որոնցում շոշափվում են
ճորա տեղակայության և ապա գահակալության տարիների ընթացքում, 1898—1854 թթ.,
հայ եկեղեցական ու ազգային կյանքում տեղի ունեցած իրադարձությունների, միջեկեղեցա-
կան փոխհարաբերությունների, ազգապահպանման ու հայրենադարձության, պատերազմի
ու խաղաղության վերաբերյալ բազմաթիվ հարցեր (Տե՛ս «Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի
կյանքը և գործունեությունը», Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1955, էջ 135—180):

Այժմ «Էջմիածին» ամսապյի ըմբերգողների ուշադրությանն ենք մերկայացնում Գևորգ
Զ Ամենայն Հայոց կաթողիկոսի մեկ ամսիկ ճամակը՝ գրված Քեմթրերիի արքեպիս-
կոպոսին, ճամակ, որն արտացոլում է հայ և անգլիկան եկեղեցիների մեր օրերի
հարաբերության պատմությունը, ինչպես նաև հայ եկեղեցու և քրիստոնեական մյուս եկե-
ղեցիների դերն ու համագործակցությունը խաղաղության համար մղված համատեղ պայ-
քարում:

Այդ ճամակը պահվում է Երևանի պետական կենտրոնական պատմության արխիվում,
ֆոնդ. հմր. 408, Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդ:

ՀԱԿՈՐ ՔԷՆ. ԳՅՈԿՉՅԱՆ

Մեր խոհերին, Մեր տված խոստման համաձայն, որոնցից կարևորագույնը ներկայի համար խաղաղության գաղափարն է:

Ա. Քրիստոնեությունը խաղաղության գաղափարը այլապես է ըմբռնում, քան պետությունը: Պետությունները և՛ աճյալում և՛ այժմ խաղաղություն ապահով հասկացել են մայր երկրի և իրենց ենթակա գաղութաբնակ ժողովուրդների անտրտուն հնազանդությունը իրենց կամքին և իրենց պահանջների անհաղթելի կատարումը: Իսկ նոցա թողոքների և անհնազանդության դեպքերում բռնի ուժի անսահման գործադրությունը:

Մոտ երկու հազար տարի առաջ հանդես եկավ Պաղեստինում Հիսուս Քրիստոս խաղաղության քարոզով՝ «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ»: Փրկչի քարոզած խաղաղության հիմքը բռնությունը չէ, այլ սերն ու եղբայրությունը, որից բխում է համերաշխություն: Եվ հիրավի միայն այս ըմբռնմամբ աշխարհը ընդմիջտ խաղաղություն կունենա, այնտեղ համերաշխություն և համամարդկային համագործակցություն կիշխեն, որին կհետևի համամարդկային երջանիկ կյանք: Փրկիչը իր այս ճոր վարդապետությամբ խաղաղության գաղափարը հակադրում է բռնության գաղափարին, որով և փորձում է զսպել մարդկային անհագ պահանջները:

Խաղաղության վարդապետության քրիստոնեական այս ըմբռնմամբ է, որ խորհրդային երկրների երեք Պատրիարքները՝ Ռուսաց, Հայոց և Վրաց, նախաձեռնությամբ Ռուսաց Պատրիարքի, ժողով գումարեցին Թբիլիսիում և որոշեցին կոչ ուղղել քրիստոնեական եկեղեցիների թուր Պետերին՝ խնդրելով հանդես գալ հանուն խաղաղության և հանդես բերել իրենց ենթակա հոգևոր դասն ու հավատացյալ հոտը:

Զերդ Սրբությունը ընդունելով հանդերձ խաղաղության գաղափարի կարեվորությունը, ներկա դեպքում չի արձագանքել երեք Պատրիարքների կոչին և ինչպես կարելի է կռահել Ռուսաց Պատրիարքին գրած Սրբությանդ պատասխանից, հատկապես այն պատճառով, որ այդ ձեռնարկի նախաձեռնությունը Զեր ենթադրությամբ ներքին անկախ զգացման ծնունդ չէ, այլ արտաքին մերժման արգասիք:

Մեզ անհայտ է Զեր կասկածի և ենթադրության հիմքը, սակայն ամենայն անկեղծությամբ կասենք, որ այդ ձեռնարկին անձնապես Մեր մասնակցելու շարժառիթները Մեր հոգու թելադրանքն է եղել և է այսօր, որ ստորև կլուսաբանենք, իսկ այժմ թող ներվի Մեզ, հարցից շեղվելով, քանի մի խոսք ասել Ամենապատիվ Ալեքսի Պատրիարքի մասին: Սրբազան Ալեքսի Պատրիարքին Մենք ի մոտո ճանաչում ենք 1948 թվից սկսած, երբ իբրև հյուր հրավիրվեցանք պրավոսլավ եկեղեցու անկախության ավտոկեֆալիայի 500-ամյակը տոնելու: Այն օրվանից սկսած հաճախ հանդիպումներ ենք ունեցել, հատկապես խաղաղության համախորհրդային կոմիտեի իբրև ղեկավար տեղապետներ: Այս հարաբերության հետևանքով մերձեցումներ տեղի ունեցան երկու քույր եկեղեցիների մեջ: Այս հիմք տարվա ընթացքում Մենք ճանաչեցինք Նորա որպես լայն աշխարհայացքի տեր, խոհուն և շիտակ անձն, որ ամենայն հավանականությամբ, արդյունք է, աստվածաբանական կրթության զուգընթաց, Նորա ստացած իրավաբանական կրթության: Կրոնական հարցերում Նա ցուցաբերում է համբերատար ոգի, ազգային հարցերում ազգասեր է, քայքայ ոչ ազգամոլ և ընդհանուր մարդկային տեսակետով մարդասեր անձնավորություն է: Նորա անձի և բնութագծի վերոհիշյալ նկարագիրը Մեզ բերել է այն համոզմունքին, որ տվյալ հարցում Նա գործել է ինքնուրույն ու անկախ և ոչ արտաքին ազդեցությամբ: Այնուհանդերձ մարդու ներքին հոգեկան



Երջանկաւաչի ժամանակ Ս. Տ. Գեղորդ ք. Եւ. Երջանկաւաչի ժամանակ Ս. Տ. Գեղորդին և
Հովնաթանի կաթողիկոսները ու Ռոմիտիանի Հայոց Եպիսկոպոս Ս. Վազգէն
վրդ. Պաշտօնէն՝ Աղապաւն Եպիսկոպոսը (1945 թ., Մարտ ամիս)

կատարելապես իրազեկ է մարդ ինքը միայն և միշտ գաղտնիք կմնա այն շտաբի համար:

Բ. Մեր ըմբռնումը խաղաղության գաղափարի կենսագործման նպատակի և խաղաղության Կոմիտեում Մեր մասնակցության շարժառիթների մասին:

Նկատի առնելով Սրբությանդ կասկածամիտ վերաբերմունքը երեք Պատրիարքների վերոհիշյալ խաղաղության ձեռնարկի նկատմամբ, այլև Ամերիկայում անգղիներեն լեզվով լույս տեսնող քանի մի թերթերի և ամերիկյան ռադիոյի տված սխալ լուսաբանությունը խաղաղության գաղափարին Մեր կողմնակից լինելու մասին, այլև համախորհրդային կոմիտեում Մեր ելույթների նկատմամբ տրված սխալ մեկնաբանության Մենք հաճությամբ տալիս ենք ինչպես խաղաղության գաղափարին կողմնակից լինելու, նույնպես նաև խաղաղության Կոմիտեում Մեր մասնակցելու շարժառիթների համառոտ նկարագիրը:

1945 թվի մայիսի 9-ին վերջացավ երկրորդ համաշխարհային պատերազմը Հիտլերի և իր բանակի ջախջախմամբ: Պատերազմից հետո արար աշխարհը անհամբեր սպասում էր ֆաշիզմի փոխարեն, որ ույժի և բռնության խորհրդանշան էր Ատլանտյան խաղաղության խոստացված ու հայտարարված քաղաքական և հասարակական բնույթ կրող լայն սկզբունքների կենսագործման, այն է՝ ազգերի ազատության և ինքնորոշման և ույժի ու բռնության փոխարեն բանականության ու խղճի սկզբունքների կենսագործման: Սակայն պատերազմից հետո տեղի ունեցող փաստերը հակառակն ապացուցեցին: Դաշնակից չորս մեծ պետությունների արտաքին գործոց նախարարների և մեծ տեղակալների խորհրդակցությունները ոչ միայն չբարելավեցին աշխարհում մարդկային կյանքի պայմանները և խաղաղություն չհաստատեցին, որին տեղում էր աշխարհը, այլ ծանրացրին ու վատացրին և մարդկային կրքերը առավել ևս բորբոքեցին. որովհետև հիտլերյան ֆաշիզմի փոխարեն նույն սկզբունքներով հանդես եկավ անգլո-ամերիկյան համագործակցությունը: Նոր բլոքը, որ գերիշխում էր Ամերիկայի կամքը, իր գործերով համոզեց աշխարհին, որ անհաճանք կերպով կազմակերպվում է երրորդ համաշխարհային պատերազմ, որի հետևանքը, նկատի առնելով ներկա պատերազմական զենքերը, պիտի լինի աշխարհի կատարյալ ավերն ու ամայացումը:

Մարդկությունը զգաց իրեն կանգնած երրորդ համաշխարհային պատերազմի ահավոր սպառնալիքի առաջ, որի սարսափն ու դառնությունը դեռ մոր էր դադարել ճաշակել, և ապավեն որոնեց: Խաղաղության գաղափարը եղավ մորա հուսատու ապավենը:

Խաղաղության գաղափարը, որ այսօր ողջ մարդկության իդեալն է և որի կենսագործման տեղում է ողջ աշխարհը, հայտնի էր քրիստոնեության արշալույսին և քարոզել ու քարոզում են քրիստոնեության հոգևոր սպասավորները. սակայն այդ գաղափարը կյանքում կենսագործելու մասին մոքա չափազանց ջանք են թափել: Քրիստոնեական կրոնի գործադիր մարմինը՝ եկեղեցին, զարգացրել է կրոնի տեսական և ծիսական կողմը. նա իր ծագման օրից ցայսօր առավելապես աշխատել է հավատ զարթեցնել ու ծավալել ժողովրդի մեջ, ձևակերպել է քրիստոնեական կրոնի դավանանքը, մշակել է եկեղեցական կանոններն ու պաշտամունքը, կազմակերպել է եկեղեցին վարչականապես և այլն: Եվ թեև քարոզել է նաև քրիստոնեական կրոնի բարոյական վսեմ գաղափարները սիրո, եղբայրության, խաղաղության ու համերաշխության գաղափարները, որ Փրկչի մարդեղության էական նպատակն է, սակայն նա քիչ է ուշադրություն դարձրել այդ գաղափարների կենսագործ-

ման վերա: Այսպես ուրեմն քրիստոնեական եկեղեցին վերոհիշյալ գործը իր ժամանակին պատվով կատարել է, որ պատկանում է եկեղեցու պատմության հին շրջանին և որ անցել է պատմության գիրկը:

Այսօր քրիստոնեական եկեղեցին նոր անելիք ունի, որ է քրիստոնեական կրոնի բարոյական վսեմ գաղափարների կենսագործումը կյանքի մեջ: Աշխարհի Փրկիչը Տիեզերքի Արարչի նպատակն ու կամքը ճանաչել ու հայտարարել է սիրո գաղափարի մարմնացումը աշխարհում: Այդ գաղափարը եղել է Փրկչի մարդեղությանն նպատակը, այդ գաղափարը եղել է նորա քարոզի նյութն ու վարդապետությունը, և այդ գաղափարի մարմնացումը եղել է նորա երկրավոր կյանքի և գործերի նպատակը: Փրկիչը այդ գաղափարով նպատակ է դրել երկնքի կամ որ նույնն է, Աստուծո թագավորություն հիմնել երկրի վերա, այն է մարդկությունը կապել միմյանց հետ սիրո և նղբայրության զգացմունքով, հաստատելով աշխարհում խաղաղ ու համերաշխ կյանք: Ահա այս քրիստոնեական հիմնական գաղափարի կենսագործումն է, որ եկեղեցին անցյալում քիչ է ուշադրության արժանի: Սույնպես նաև մեր ժամանակի համաշխարհային երկու խոշոր պատերազմների ընթացքում նա հանդես չի եկել, իր հավատացյալների հոծ բազմությամբ, որպես կազմակերպված անկախ հաստատություն պատերազմի ավերիչ հրդեհը մարելու համար:

Այսօր ավելի, քան երբևիցե ժամանակը եկել է, որ քրիստոնեական եկեղեցին հանդես գա, որպես ամբողջական անկախ հաստատություն, կենսագործելու քրիստոնեական կրոնի վերոհիշյալ հիմնական վարդապետությունը: Այսօր քրիստոնեական եկեղեցին և մյուս բոլոր կրոնները իրավունք չունեն այլևս լռելու, երբ մարդկության համարյա մեկ երրորդը, իրենց ստորագրություններով հանդես են եկել պատերազմի հակառակ և խաղաղություն են պահանջում. խաղաղություն, որ քրիստոնեական վարդապետության հիմնական գաղափարներից մեկն է: Քրիստոնեական եկեղեցու և մյուս կրոնների այսօրվա լռությունը համազոր կլինի ինքնաչեզոքացման. կրոնն ու եկեղեցին կկորցնեն իրենց հմայքը ժողովրդի աչքում և կյանքի համար կդառնան անկարևոր:

Քրիստոնեական կրոնի հիմնական վարդապետության՝ սիրո և նղբայրության և նոցանից բխող համերաշխության գաղափարների կենսագործումը կյանքում ահա խաղաղության գաղափարի պաշտպանության Մեր ճպատակը և խաղաղ պայքարի Մեր ընթացումը, և համախորհրդային խաղաղության Կոմիտեում Մեր մասնակցելու շարժառիթներից մեկը:

Խաղաղության կողմնակից և պատերազմի հակառակ ենք եղել Մենք նաև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը սույն այս քրիստոնեական վարդապետության տեսակետով: Այդ առթիվ Մենք հատուկ գրություն ենք ուղարկել իր ժամանակին անգլիքան եկեղեցու Պետին խնդրելով, որ իբրև մեծ և զորեղ եկեղեցու Պետ, բողոքի ձայն բարձրացնե պատերազմի դեմ, վստահացնելով, որ մյուս եկեղեցիներն էլ կարձագանքեն իրեն: Եթե Մեր անգլիկներն գրությունը տեղ հասած է, ապա ուրեմն Ձեր արդիվում կարելի կլինի գտնել այն:

Գ. Մենք խաղաղության կողմնակից ենք և պատերազմի հակառակ նաև մի շարք այլ պատճառներով: Մարդկությունը ոչ միայն հակառակ է առաջիկա կազմակերպվող պատերազմին, այլ ընդհանրապես պատերազմներին և տևական խաղաղություն է պահանջում: Նորա այս տեսակետը հիմնված է բոլոր ազգերի պատմության տված փաստերի վերա, որոնք միաբերան վկայում են թե կոլտուրական կյանքի զարգացումն ու մարդկային կյանքի բարեկեցությունը տեղի է ունենում ազգերի խաղաղ կյանքի շրջաններում և ընդ-

հանրապես կոիվների ու պատերազմների շրջանները ավերիչ ու կործանիչ շրջաններ են, երբ մարդ իր շինածը, իր նյութական ու հոգեկան ստեղծագործությունը ավերում ու ոչնչացնում է: Պարզ է եզրակացությունը. կուլտուրական կյանքի զարգացման և մարդկային կյանքի բարեկեցության համար անհրաժեշտ է տևական խաղաղություն:

Դ. Քրիստոնեական վարդապետության ըմբռնմամբ միայն Աստված է մարդու կյանքի վերա իրավատեր և ոչ ոտարը կամ նույնիսկ ինքը մարդը: Այս տեսակետով է, որ եկեղեցին արգելում է թաղել ինքնասպաններին: Քրիստոնեական վարդապետության այս տեսակետը պարտադիր է ամեն մի հավատացյալի համար, լինի նա աշխարհական թե հոգևորական, խաղաղության շրջաններն են միայն, երբ մարդ հանգիստ ու խաղաղ ապրում է և իր քնական մահով վախճանու և պատերազմ է, որ անխնա ոչնչացնում է միլիոնավոր կյանքեր, որոնց Տերը միայն Աստված է:

Ե. Մենք խաղաղության կողմնակից և պատերազմի հակառակ ենք նաև ելնելով քրիստոնեական վարդապետության խաղաղության գաղափարի ըմբռնումից, ըստ որում մարդկային փոխհարաբերության հիմք հանդիսանում է սերն ու համերաշխությունը և ոչ ույծն ու բռնությունը: Մինչև այժմ աշխարհը կառավարվել է ույծի ու բռնության սկզբունքով և ոչ՝ մարդկային բանականության և խղճի թելադրանքով՝ արդարության և ճշմարտության սկզբունքներով: Այսօր մարդկությունը հասունացել է, կուլտուրապես զարգացել է, ուստի և գիտակցում ու կամենում է իր անհատական և ազգային իրավունքների տերը դառնալ. այս իսկ պատճառով էլ նա բողոքում է բռնության և բռնակալության դեմ: Ժամանակը եկել է, որ կուլտուրական մարդկությունը քննարկե և լուծե ինչպես անհատի անհատական և քաղաքացիական իրավունքների, նույնպես և ցեղերի ու ազգերի քաղաքական ազատության հարցերը խաղաղության գաղափարի խաղաղ պայքարի միջոցով և ոչ պատերազմով:

Ձ. Վերջապես Մենք հակառակ ենք պատերազմին և կողմնակից խաղաղության նաև հայ ժողովրդի ազգային շահերի տեսակետով: Հայ ազգը իր աշխարհագրական դիրքի և իր տոկուն ու քրտնաջան աշխատանքի և ընդունակությունների շնորհիվ ձեռք բերած գրավիչ արժեքների հետևանքով, միշտ ենթակա է եղել թե՛ նսական ու քաղաքակիրթ ազգերի բռնի շահագործման և թե՛ ավարով ապրող, այլոց արդար վատտակի պտուղները հանդիրավի վայելող, վայրագ ու բարբարոս ազգերի ավազակաբարո հարձակումներին, ի բաց առյալ խորհրդային Միությունը, ուր մարդու շահագործումը մարդու կողմից հետապնդվում է օրենքով, համարյա իր ամբողջ պատմական կյանքում մեծապես տուժել է, և միայն կարճատև վայելած խաղաղության շրջանում է, որ իր ջանասիրության, տոկունության և հոգեկան ընդունակությունների շնորհիվ ստեղծել է իր մշակույթը, որ և միշտ սիրել է և ուր ստիպված է եղել գաղթել, տարել է իր հետ և պահպանել ու զարգացրել է այն: Իսկ իր հայրենիքում, շնորհիվ իր զարգացած ազգային ինքնագիտակցության, պայքարել է հանուն իր գաղափարների պաշտպանության քրիստոնեական կրոնի և ազգի ազատության և հայրենիքի անկախության համար, որով և հարգանք է վայելել օտարներից ու պահպանել իր ֆիզիկական գոյությունն ու ազգային ինքնությունը: Ահա թե ինչու հայ ազգը միշտ սիրել է խաղաղությունը և ասել պատերազմը և դարավոր պատմական փորձը թելադրում է նրան այդպես վարվել և այժմ:

Վերոհիշյալ փաստերը գալիս են հաստատելու, որ այս ու այն արտաքին ներշնչման կամ թելադրանքի արդյունք չէ, որ Մենք կողմնակից ենք

խաղաղության և հակառակ պատերազմի, այլ ի սեր ավետարանական քարո-
յական վսեմ սկզբունքների՝ արդարության և ճշմարտության գաղափարների,
որոնց ուխտել ենք ծառայել հոգևոր կոչում ստանալիս, ի սեր մարդկային
հոգու ստեղծած հոգեկան և մյուսական բարիքների պահպանության, հա-
ճուն սիրտ, եղբայրության, համերաշխության ու համագործակցության և նո-
ցա հետևաձք մարդկային կյանքի երջանկության: Եվ վերջապես շեն ու հա-
րուստ աշխարհն ու մարդու կյանքը ավերեց ու անհասցումից փրկելու համար
է, որ Մենք պայքարում ենք հանուն խաղաղության և հակառակ ենք պատե-
րազմի:

Ահա այս սկզբունքների համար է, որ ոմանք հակառակ են Մեզ և պար-
սավում Մեր գործունեությունը. Մենք այդ փառքից ու պատվից չենք հրա-
ժարվում, թող շարունակեն պարսավել ու հայհոյել. որովհետև հանգիստ է
Մեր խիղճը, որի թելադրանքով և գործում ենք: Մենք այդ գաղափարներով
դաստիարակվել ենք, այդ գաղափարները քարոզել ու նոցանով ապրել ենք
Մեր երիտասարդ հասակում, որի ապացույց կարող են լինել փոխանորդու-
թյան և առաջնորդության շրջանի Մեր քարոզները, որոնցից առաջիկները
լույս են տեսել, իսկ երկրորդները շուտով լույս կտեսնեն:

Է. Քրիստոնեական եկեղեցիների համաժողովներ: Վաթսուն և ավելի
տարիներ է, որ քոյոր քրիստոնեական եկեղեցիները, որոնց թվում նաև հայոց
եկեղեցին, երբեմն-երբեմն ժողովներ են գումարում, ուր կարդացվում են
աստվածաբանական գիտական զեկուցումներ եկեղեցական-կրոնական հար-
ցերի մասին, արծարծվում են գործնական խնդիրներ եկեղեցիների կարիք-
ների մասին, տեղի է ունենում մտքերի փոխանակություն և ցրվում են: Հայոց
եկեղեցին միշտ մասնակցել է հիշյալ ժողովներին Ամենայն Հայոց Ծայրա-
գույն Պատրիարք-կաթողիկոսի կողմից նշանակված եռանձնյա հանձնաժո-
ղովով: Մենք միշտ հետևել ենք այդ ժողովներին և կառնել ենք հասկանալ
եկեղեցական ժողովների գործունեության կոնկրետ նպատակն ու ծրագիրը.
սակայն ցարդ չի հաջողվել Մեզ տեսնել ոչ ծրագիրը, եկեղեցիների միության
կողմից հաստատված, և ոչ էլ հասկանալ համաժողովների բուն նպատակը:
Հայ եկեղեցու հանձնաժողովների կողմից ներկայացված զեկուցումներից
հասկացել ենք միայն, որ այդ ժողովները նպատակ ունեն քրիստոնեական
եկեղեցիներին մոտեցնել միմյանց, իրերահասկացողության քերել և քարե-
կամական կապ հաստատել նոցա մեջ և ըստ ամենայնի օգտակար լինել միմ-
յանց: Կասկածից դուրս է, որ այդ ժողովները որոշ օգտակար դեր կատարել
են. սակայն կյանքը չի վկայում, որ այդ ժողովները քրիստոնեական քարո-
յական գաղափարների տեսակետով որևէ նվաճում կատարած լինեն մարդ-
կության հոգու վերա, որ քրիստոնեական կրոնի էական նպատակն է, և մար-
դը մնացել է նույն եսականը, ինչ որ էր առաջ: Մենք տեսնում ենք, որ եկե-
ղեցիների փոխհարաբերությունը քարեկամական կամ քրիստոնեական եղ-
բայրական լինելուց շատ հեռու է. տեսնում ենք նաև, որ եսականությունը
աշխարհի խոշորագույն մասում ավելի զորեղ է, քան առաջ, որի հետևանքով
և ավելի սուր կերպարանք է ստացել շահագործությունը և՛ անհատական, և՛
ազգային և՛ պետական մարզերում: Երիտասարդությունը ավելի սանձարձակ
է դառնում իր թե՛ մարմնական և թե՛ հոգեկան կրքերի նկատմամբ և հեռու է
քրիստոնեական գաղափարականությունից: Քրիստոնեական կրոնի քարոյա-
կան վսեմ գաղափարների ազդեցությունը իսպառ չի երևում կյանքի որևէ
ասպարեզում:

Մեր տեսակետով նպատակահարմարն ու լավագույնը կլինեն, եթե ե-
կեղեցիները կազմակերպվեցին, որպես անկախ քրիստոնեական միություն,

մպատակ դնելով քրիստոնեական քաղաքական գաղափարները կենսագործել կյանքում և հանուն քրիստոնեական քաղաքական գաղափարների կենսագործման՝ խաղաղ գաղափարական պայքար մղել կյանքի բոլոր ասպարեզներում, ռեղի ունեցող և ունենալիք չարիքների և շեղումների դեմ: Ահա Մեր ըմբռնմամբ քրիստոնեության խաղալիք դերը կյանքում, որ նշել է Փրկիչն Ինքը և՛ իր վարդապետությամբ, և՛ իր կյանքով:

Մեր տեսակետով այսօրվա մարդկային տառապանքների, թշվառության և ընդհանրապես կյանքի ոչ քնականոն ընթացքի պատճառը մարդու մտքի և սրտի անճեղրաշնակ զարգացումն է, մարդկային նսականության հակաթույլի պակասը, այն է՝ սիրո և եղբայրության զգացմունքի պակասը: Այս քաղաքական գաղափարների զարգացման ապարատը խիղճն է: Ճա է որոշում քարին և չարը, լավն ու վատը, արդարն ու անարդարը և ճշմարիտն ու սոստը, և որպեսզի խղճի թելադրանքները անշեղ ու անխափան ընթանան՝ կարևոր է զարգացնել նաև կամքը: Երբ մարդու խիղճն ու կամքը քաղաքական դաստիարակվեն՝ մարդու հոգու մեջ կգործանա սիրո և եղբայրության զգացմունքը և մարդը կազատվի եսական զգացմունքի մերքին թելադրանքներից, ըստ Ավետարանի, մարդը «վերստին կծնվի», լքված սիրո և եղբայրության զգացմունքով և երջանիկ կապրի աշխարհում: Ահա Մեր պատկերացումն ու մոտավոր ծրագիրը քրիստոնեական եկեղեցիների համախորհուրդ գործունեության մասին: Մեծապես գոհ կլինենք լսելու Սրբությանդ տեսակետը այս մասին:

Մարդկության այսօրվա տրամադրությունն ու կամքը համընկնում է Մեր մերոհիշյալ ծրագրին, նորա խաղաղության համար վարած խաղաղ պայքարի նպատակը ոչ այլ ինչ է, եթե ոչ տեսնել կյանքում սեր, եղբայրություն և համերաշխություն և, բռնի ուժի ու բռնության փոխարեն, մարդկային բանականության և խղճի իշխանություն, որին կհետևի աշխարհում համագործակցություն և երջանիկ կյանք: Ուստի և, ըստ Մեզ, անհրաժեշտ է կազմակերպել բոլոր եկեղեցիների և կրոնների Պետերի կոնգրեսի գումարումը քաջալիքելու նպատակով, մարդկության ներկա խաղաղ պայքարը, որ կլինի սկիզբը վերևում Մեր հիշած, նոր ծրագրով կազմվելիք, եկեղեցիների անկախ միության գործունեության:

Մեր և Մեզ մեծ խորհողների առաջարկով, 1951 թվի նոյեմբերի 27-ին գումարված կոնֆերանսը նպատակահարմար գտավ հրավիրել բոլոր եկեղեցիների և կրոնների Պետերի կոնգրես: Սիրում ենք հավատալ, որ այս անգամ Ջերդ Սրբությունը հավատ կընծայե Մեր խոսքի անկեղծությանը, կզնախատե Մեր հոգու ազնիվ ապրումները, հաճությամբ կընդունե քրիստոնեական եկեղեցիների և կրոնների Պետերի համաշխարհային կոնգրես հրավիրելու առաջարկը և, իբրև ծավալուն և զորեղ եկեղեցու Պետ, կհրավիրե կոնգրես, որ գրավական է ձեռնարկի հաջողության և որ Մեր և Մեզ մեծ խորհողների ջերմագին ցանկությունն է:

Ը. Հայության անցյալն ու ներկան և օտարների ու հայ ժողովրդի դիրքն ու վերաբերմունքը այս հարցում:—19-րդ դարու երկրորդ կիսից սկսած հայկական հարցը եվրոպական պետությունների ու դիվանագետների ուշադրությանն է արժանացել և հաճախ նոցա քննարկման առարկան հանդիսացել ու հալ ժողովրդի պահանջների արդարությունը ճանաչվել նոցա կողմից: Թեև միշտ էլ ճանաչված արդարության կենսագործումը անգործադրելի է մնացել հատկապես Անգլիայի և ցարական Ռուսաստանի հակառակ շահերի պատճառով, մինչև որ սուլթանական Թյուրքիան իր նպատակին հասավ՝ ամհատապես գործադրելով հայության քնաջնջման կանխորոշած գազանա-

բարձր ոչ մարդկային ծրագիրը, որի հետևանքով, թուրք պետության սահմաններում ապրող երեք միլիոն հայությունը խոշոր չափով սրախողխուլ եղավ և քաղցից ու ծարավից մահացավ մուլիոն երկրի սահմաններում, մնացյալը ցրվեցավ Եվրոպա, Ամերիկա, Ռուսաստան և այսօր, երեք միլիոնի փոխարեն, միայն 150.000 հայություն է մնացել Թյուրքիայում: Հայության սուգի և ողբի այս շրջանում է, որ նորածին խորհրդային իշխանությունը իր էլ տառապանքի ու ցեղության օրերին, կենսագործում է հայ ժողովրդի դարավոր պատմական իղձը՝ ի շարս քաղաքի վանք ազգությունների, ստեղծելով նաև հայ անկախ պետություն՝ ընդմիջտ ազատելով հայությունը իր գլխից կախված դամկէլյան սրի և կայք ու գույքի և կյանքի անապահովության վտանգից, այն պարբերական կոտորածների ու բնաջնջման մղձավանջից: Նույն այդ խորհրդային պետությունն է, որ իր վարած ներքին ազգամիջյան համերաշխ քաղաքականության և տնտեսական ու մշակութային լայն աջակցության շնորհիվ, հնարավորություն տվավ հայ ժողովրդին, մոխրից ու ավերակներից հարություն առնելով, ստեղծել իր սեփական տնտեսությունը և առաջավոր կուլտուր-կրթական կյանքը և որի հետևանքով հավասար տեղ գրավել Միության 16 դաշնակից պետությունների շարքում:

Հայ ժողովրդի հակառակորդները, և հատկապես օտարները, այսօր պահանջում են հայ ժողովրդից ու Մեզին թշնամական վերաբերմունք ցուցադրել հանդեպ խորհրդային իշխանության, որ վերևում թիշատակեցի՜ք՝ մոռանալով, որ իրենք են եղել ասողը, թե հայ ժողովրդի ազատությունը հնարավոր է միայն Ռուսաստանի միջոցով և նորա հովանու ներքո:

Ջերդ Սրբություն, առաջք, խնդրեմ, մարդկային խղճի ո՛ր թելադրանքով մեղանչեք երախտագիտական զգացմունքի դեմ և թշնամական դիրք թռնեք մեր ազգի խոշորագույն բարերարի՝ խորհրդային Միության դեմ: Կամ բարոյականության ո՛ր պատգամով՝ Ամերիկայի անգլիներեն լեզվով լույս տեսնող մամուլի միջոցով Մեր հակառակորդները հայտարարում են, թե հայ եկեղեցու անջատողական փաստերը կշարունակվեն, քանի դեռ Ամենայն Հայոց Հայրապետը բարյացակամ վերաբերմունք կունենա խորհրդային իշխանության հանդեպ: Հայ ժողովուրդը միշտ հավատարիմ է եղել իր ուխտին և բարոյական սկզբունքներին, ինչպես և երախտագետ՝ հանդեպ իր բարերարների, մուլը կմնա և հետ այսու: Հայ եկեղեցին ու հայ ժողովուրդը շատ են տեսել նման սպառնալից վիճակ և տոկացել ու հաղթանակել են: Նույն վիճակն է, որ տեսնում են նաև այսօր. սակայն ցավալի է, որ այն ոչ վայրագ և բարբարոս ցեղերի, այլ քաղաքակիրթ պետությունների կողմից: Հայ ժողովուրդը այսօր էլ հավատարիմ է և կմնա այդպիսին հայ եկեղեցուն և նորա միասնականությանն ու ազգային միությանն. սույնպես նաև իր խղճի արդար թելադրանքին և բարոյական գաղափարներին, երախտագետ մնալով նաև իր բարերարներին, միաժամանակ պահպանելով անաչառ ու քարեմիտ վերաբերմունք դեպի օտարները:

Թ. Սրբությանդ քարոզը Լոնդոնի հայոց եկեղեցում և ս. Վարդանանց ճակատամարտի զմահատականը:

Սրբությունդ իր քարոզի մեջ հաճել էր վերագրել հայ եկեղեցուն և հայ ժողովրդին հետևյալ արժանիքները. 1. «Ս. Վարդանանց ճակատամարտը խորհրդանշում է և արտահայտում հայ ժողովրդի նվիրվածությունը քրիստոնեական հավատին»: 2. «Հայոց եկեղեցին հայ ժողովրդի և ազգի հետ իր սերտ մուլնությանմբ, կենդանի և վառ է պահել նորա մեջ քրիստոնեական հավատը»: 3. «Հայոց եկեղեցին և ազգը շատ վաղ՝ քրիստոնեական եկեղեցու առաջապահը հանդիսացան»: Այս եզրակացություն է այն փաստի, որ հայոց



ԵՐԶԱՆԿԱՆԻՇԱՆԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՕՇՈՒՄ Է Տ. ՎԱԶԳԵՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԾԱԿԱՏԸ (1851 թ., ՄԱՅՐ ՏԱԾԱՐ)

եկեղեցից և հայ թագավորությունը առաջինը եղան, որ քրիստոնեությունը տեւտական կրոն ճանաչեցին և օրինակ հանդիսացան Կոստանդինոս կայսեր, որ տասը տարի հետո միայն հետևեց հայոց Տրդատ Գ թագավորին: 4. «Ողջ պատմության ընթացքում Հայաստանը լինելով Եվրոպայի և Արևելքի քառուղու վերա, հայ ժողովուրդը հաճախ ենթակա է եղել հարձակումների, պարտվել ու նվաճվել է, սակայն կայուն դիմադրություն ցույց տալով նոցա կենսական դեր է խաղացել և անձնագոհության օրինակ հանդիսացել Եվրոպայում փրկելու գործում՝ տալով նրան պաշտպանության ու պատրաստության ժամանակ, դանդաղացնելով ասպատակող հորդանքների արշավը: Եվ այս այն ժամանակ, երբ իրենց երկիրը ավերվել ու գրավվել էր»: 5. «Դեռ ավելին, հայ ժողովուրդը անվհատ օրինակ է հանդիսացել ազատության ոգու, ազգային միության և մշակութային իսկական արժեքների. մի թանկագին օրինակ բոլոր ժամանակների համար և ոչ նվազ մեր օրերի համար»: «Այս պատճառով է, որ մենք պատվում ենք այսօր, 1500 տարի հետո, այդ ճակատամարտի հերոսներին և աղոթում, որ Աստված հավերժ հավատարիմ պահե հայ ժողովուրդը այդ օրինակին և օրինակ հանդիսացնե այդ հավատին»:

Այժմ հայ ժողովուրդը իր հայրենիքում, ՍՍՌՄ-ում ապրող ժողովուրդների եղբայրական օգնությամբ, մանավանդ ռուս մեծ ժողովրդի աջակցությամբ հանգիստ ու երջանիկ է ապրում. մինչդեռ արտասահմանում նա ճնշումների է ենթակա, պատակտողական սպառնալիքի տակ է, զրկված է իր հայրենիքն ու իր մեծագույն սրբավայրը՝ ս. Էջմիածինը այցելելու իրավունքից և ուր ոտնահարվում է նորա մարդկային արժանապատվությունը, որի դեմ նա պայքարել է և չպիտի զարմանալ, եթե այժմ էլ պայքարե:

Սրբությանդ տված վերոհիշյալ գնահատականները հայ եկեղեցում և հայ ժողովրդին Մեզ զարմացնում, հիացնում և մխթաբում է: Ջարմացնում է Ձեր ունեցած խորիմաստ ծանոթությունը հայ ազգի և եկեղեցու պատմության: Հիացնում է Ձեր ճշգրիտ ու նուրբ ըմբռնումը հայ ազգային և եկեղեցական պատմության, ինչպես և նորա բանաստեղծական պատկերացումը: Մխթաբում է Ձեր ուղղամիտ և համարձակ ելույթը, ներհակ ներկա ժամանակի ոգուն, որ պահանջում է իր նսական, շահադիտական, միտումնավոր ծրագրերը փառաբանել ու ծափահարել, իսկ ըմբռնումներին ու չեզոքներից ուսլառնալիքի տակ պահելով ու երկյուղ ներշնչելով հավատալիքն է անում: Լճանավանդ մխթաբական է այն պատճառով, որ պաշտոնական խոշոր դիրք ունեցող և պետական ու եկեղեցական արժեքներկայացնող մի օտար անձն, որպիսին է Ձերդ Սրբությունը, տալիս է ուղղամիտ և արժեքավոր գնահատական հայ եկեղեցու և ազգի պատմության և նոցա կատարած պատմական դերի մասին ի սեր օտարների շահերի: Մեզ համար հաճելի և ուրախալի է նաև Ձեր այն հայտարարությունը, թե անգլիքան եկեղեցին և անգլիական ժողովուրդը հանդեպ հայ եկեղեցու և ազգի տածում է անկեղծ բարյացակամության և հարգանքի զգացմունք: Հիշյալ քարոզում Սրբությանդ հիշատակած փաստերը ինքնին վկայում են հայ եկեղեցու և հայ ժողովրդի հաճեալ անգլիքան եկեղեցու և անգլիական մեծ ժողովրդի տածած անկեղծ բարեկամության և խորը հարգանքի զգացմունքի, որ Ձեր իսկ հայտարարությամբ, անձամբ զգացել եք և Նրուսաղեմի աճիլիքան եկեղեցու արքեպիսկոպոսի հալորդագրությամբ իրազեկ եղել:

Հայ ազգի և եկեղեցու համար շատ լավ գնահատականներ տվել են նաև, հեռավոր և մերձավոր անցյալում, Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի դիվանագետներ ու պետական և քաղաքական անձինք, և սակայն այսօր մոռացվել է այդ անցյալը և փոխվել նոցա դիրքն ու դերը հանդեպ հայ եկեղեցու և հա-

յություն: Իկնի գործի անցնելով դիվանագիտական զարտուղի և ոլորապետություն ուղիներով և ներքին ու արտաքին միջամտություններով սպառնում են և արդեն իսկ պատակաբեկական և անջատողական փորձեր են կատարում հայ եկեղեցու և ազգի նկատմամբ, որ ոչ արդար է և ոչ ներել և ոչ էլ մանավանդ սազակյան իրենց դիրքին:

Հայոց առաքելական և եկեղեցին քրիստոնեական հմագույն եկեղեցիներին մեկ է և հարուցի իր առաքելական ծագմամբ: Հայաստանը աշխարհում առաջինը եղավ, ուր թագավորը, նախարարները, բանակն ու ժողովուրդը ազգություն ու պետականորեն քրիստոնեության հարեցին և քրիստոնեությունը պաշտոնական կրոն հռչակվեցավ: Տիեզերական քրիստոնեական եկեղեցու աստվածության մեջ առաջինը զարնող արժեքավոր երևույթներ են, սակայն ավելի նշանակալից և արժեքավոր է այն երևույթը, որ հայ եկեղեցին միակն է, որ հավատարմությամբ և ճշտությամբ պահպանել է տիեզերական եկեղեցու պատկերը: Հայ եկեղեցին նույնությամբ պահել է տիեզերական եկեղեցու դավանանքը, որ է տիեզերական եկեղեցու գոյության շրջանի առաջին երեք տիեզերական ժողովների դավանանքը: Հայոց եկեղեցին որոշում ունի աստվածային հայտնության այս ավանդի վերա որևէ հավելված չընդունել, որպեսզի նախնական տիեզերական դավանանքը չաղաղվի: Տիեզերական եկեղեցու շրջանը վերջանում է 451 թվականով, երբ եկեղեցիները բաժանվում են և տիեզերականությունը լուծվում է: Հայոց եկեղեցին համարում է ճշմարիտ ու պարտադիր բոլոր քրիստոնեական եկեղեցիների համար միայն տիեզերական եկեղեցու որոշումները, ուր մասնակցում են բոլոր քրիստոնեական եկեղեցիները և որոշումները աստվածային ներշնչական բնույթ ունեն: Հայոց եկեղեցին պահել է նաև տիեզերական եկեղեցու սովորություններն ու ավանդները, ինչպես նաև նորա դեմոկրատիկ վարչաձևը ընտրական և ժողովական սկզբունքներն ու բոլոր տեսակի ժողովներում աշխարհիկ տարրի մասնակցությունը: Վերոհիշյալ տեսակետներով հայոց եկեղեցին հանդիսանում է տիեզերական եկեղեցու միակ փոքրիկ նմուշը: Նա իր այս հատկություններով յուրատեսակ մի ծաղիկ է գոյություն ունեցող քրիստոնեական եկեղեցիների ծաղկափունջի մեջ, որ հավատի և քրիստոնեական գաղափարների համար իր վարած պայքարով և թափած արյամբ մարտիրոսացած ու սրբացած է, և պատվով ապրել, ապրում է և իրավունք ունի ապրելու և բարոյական պահանջ հայտարարելու մյուս եկեղեցիներին, որ իրեն հովանավորեն և սահարդար ու միտումավոր ձգտումների դեմ պաշտպանեն:

Հայ եկեղեցին բոլոր մյուս եկեղեցիների և կրոնների հանդեպ ունի համբերատար ու ներողամիտ վերաբերմունք. իր ծագման օրից ինքնուրույն, անկախ և վեհիշարվ է, այդպես էլ ճանաչում է մյուս եկեղեցիներին: Միանգամայն հեռի է և հակառակ եկեղեցիների ձուլման գաղափարին, սակայն միշտ պատրաստ համագործակցության մյուս եկեղեցիների և կրոնների հետ բարոյական գաղափարների ու ձեռնարկների հողի վերա:

Ժ. Անգլիքան եկեղեցու կատարելիք դերը ներկայումս: Բողոքական եկեղեցին ճշմարտություն որոնող և հանուն ճշմարտության պայքարող ոգի է ունեցել անցյալում, որի ծնունդ է եկեղեցական վերանորոգությունը (ռեֆորմացիան): Բողոքական եկեղեցու այդ ոգու շնորհիվ է, որ քրիստոնեական աստվածաբանությունը դարձել է գիտություն և հեղինակություն ստացել: Վաղել է, որ անգլիքան եկեղեցին առօր էլ հանդես գա իր անցյալ ճշմարտություն որոնող և հանուն ճշմարտության պայքարող ոգով: Ժամանակը նպաստավոր է, և ուղիք էլ հրապարակի վերա:

Նկատի առնելով համայն մարդկության ներկա կյանքի վիճակը՝ Մեր կար-

Նիքով անգլիքան եկեղեցին այսօր երկու անելիք ունի. 1. Գործնական քրիստոնեության քարոզով հանդես գալ, իր շուրջը հավաքելով և իրեն հետ կապելով բողոքական եկեղեցու հատվածական բոլոր ճյուղերը համուն քրիստոնեական բարության գաղափարների կենսագործման, որին անշուշտ կարծազանքեն արևելյան քրիստոնեական ազգային փոքր եկեղեցիները: Մեզ թվում է, որ կարծազանքեն նաև ոռու պրավոսլավ եկեղեցին իր ավտոկեֆալ ճյուղերով: Այս ձեռնարկի նպատակը կլինի մարդկության հոգու մեջ զարթեցնել ու զարգացնել սիրո, եղբայրության, համերաշխության ու համագործակցության զգացմունքները, որի հետևանքով կդադարի կյանքում ույծի և բռնության իշխանությունը, տեղի տալով քանականության և խղճի իշխանության: Այս ձեռնարկը իր գաղափարով և նպատակով մնաց է կյանքում ծնունդ առած խաղաղության դրոշակակիրների համամարդկային մեր շարժման, որ պայքարում է մույժ միջոցներով, մույժ գաղափարի կենսագործման համար: Հասկանալի է ուրեմն, որ անգլիքան եկեղեցու մեր ձեռնարկը հաջողությամբ կը պսակվի, որովհետև խաղաղության կողմնակիցները կդառնան մեր ձեռնարկի հետևորդներ:

2. Նախաձեռնել բոլոր քրիստոնեական եկեղեցիների և բոլոր կրոնների կրոնապետների կոնգրեսի կազմակերպումը՝ նպաստելով մեր նպատակի կենսագործման, որով աշխարհը սլիտի խաղաղի, մարդկությունը հոգեպես հանգստանա և երջանիկ ապրի:

Եվ վերջապես, անկախ վերոհիշյալից, նկատի առնելով, որ այսօր հայ եկեղեցու և հայ ժողովրդի հանդեպ, անտեղի և անարդար հալածանք կատարանալիս, ցանկալի և նպատակահարմար կհամարեինք, եթե Դուք ևս այն նույնատակահարմար տեսնեք, որ Լոնդոնի հայոց եկեղեցում Ձեր տված գնահատականը հայ եկեղեցու և ազգի մասին հաճեիք հայտարարել ի լուր աշխարհի, որին այնքան կարոտում է ճշմարտության անգիտակ բազմաթիվ սնմել ժողովուրդ. մանավանդ թե, ճշմարտություններ հայտարարելու համար սահմանված, անգլիքան եկեղեցու և անգլիական պառլամենտի ամբիոնները տրամադրելի են Արքայանդ:

Խորին հարգանք և քրիստոնավանդ եղբայրական սիրով մնամ

ԳԵՎՈՐԳ Զ





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

**Մայիսի 5-ին, կիրակի.—7 կիրակի (Կա-
նաչ կիրակի).**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է
մատուցում տ. Արիս Ծ. վրդ. Ծիրվանյանը և
«Հայր մեր»-ից առաջ քարոզում օրվա խոր-
հորդի համաձայն:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայ-
րապետի նախագահությամբ, կատարվում է
հոգեհանգստյան կարգ՝ հոգևոր ճեմարանի
դասախոս, նորոգ հանգուցյալ Գրիգոր
Գյուլյանի յոթնօրեքի առիթով:

Արարողությանը ներկա են հանգուցյալի
ընտանիքի անդամները, հարազատները,
քարեկամները, ընկերները:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս Ծ.
վրդ. Ծիրվանյանը սրտառույշ դամբանական
է խոսում, վեր հանելով Գրիգոր Գյուլյանի
կյանքի և գործունեության ուսանելի կողմե-
րը՝ որպես մանկավարժի, քանաստեղծ-
գրականագետի և հայրենասեր հայ մարդու:

Արարողությունից հետո Վեհափառ Հայ-
րապետը Վեհարանում ընդունում է հան-
գուցյալի ընտանիքին, իր և Մայր Աթոռի
վիշտն է հայտնում Գրիգոր Գյուլյանի մահ-
վան առիթով և ապա մխիթարության, սփո-
փանքի հայրական խոսք ուղղում Գյուլյան
սգակիր ընտանիքին:

Ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող
